ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

քաղաք Հրազդան *09 ՀՈՒԼԻՍԻ 2024թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Անդրանիկ Բաբայանը, Գևորգ Գյուրջյանը, Ղևոնդ Եղիազարյանը, Արշավիր Խաչատրյանը, Սուսաննա Կարապետյանը, Գինեվան Ղազարյանը, Անահիտ Մարտիրոսյանը, Վահրամ Մեսրոպյանը, Սևակ Միքայելյանը, Խաչիկ Մուրադյանը, Մերի Տոնոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
ԱՐԵՎԻԿ Եփրեմյան, Գուրգեն Հակոբյան, Գեղամ Հակոբյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարուժան Սաֆարյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ռոբերտ Դանիելյանը

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 09-Ի N 08 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 09-ի N 08 նիստի օրակարգը.
1) Հրազդան համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների քննարկման մասին
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին
3) «Ավանգարդ Ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից Հայաստանի

Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող Հրազդանի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու վերաբերյալ
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025 -2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին
5) Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի վերաբերյալ հաղորդում ներկայացնելու մասին
6) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 215-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
7) Հրազդան համայնքի հողային հաշվեկշիռը համաձայնեցնելու մասին
8) Հողամասերի փոխանակություն կատարելու մասին
9) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
10) Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
11) Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին
12) Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու մասին
13) Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օտարելու մասին
14) Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի N 112 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
15) Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ և ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՌՈԲԵՐՏ ԴԱՆԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 37-րդ կետով.

Հրազդան համայնքում Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզպետարանի կողմից իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները ընդունել ի գիտություն և միջոցներ ձեռնարկել հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ և ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁևԱՎՈՐՄԱՆ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 34-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը և Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 24-ի թիվ 37-Ն որոշումը.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը»՝ համաձայն N 1 հավելվածի:
2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի անդամության դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109/

Լսեցին
«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱԶԴԱՆԻ ԳԱԲՐՈՆԵՐԻ և ԳՐԱՆՈԴԻՈՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 42-րդ կետով, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով 2024 թվականի հունիսի 25-ին Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը.

1. «Ավանգարդ ինվեսթ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական

սահմաններում գտնվող Հրազդանի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու հայտին համաձայնություն չտալ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 - 2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1, 2, 3 ,4 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ն/

Լսեցին
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

1.Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն N 1, 2, 3, 4, 5 հավելվածների:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 215-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԵՎԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 215-Ն որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ն/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով.

1.Տալ համաձայնություն Հրազդան համայնքի հողային հաշվեկշիռին՝ համաձայն 1 և 2 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ բաժնի 30-րդ կետով և հիմք ընդունելով Գնել Կարապետյանի 2024 թվականի հուլիսի 4-ի համաձայնագիրը.

1.Թույլատրել Հրազդան քաղաքի Վանատուր թաղամասի Հայ Ֆիդայիների փողոց 13/7 հասցեում գտնվող Գնել Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 24062024-07-0148, գաղտնաբառ՝ 5EL5AH6NDMPQ) 255.0քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասը փոխանակել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 27062024-07-0161, գաղտնաբառ՝ KHSTIY7IMP1E) Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 20 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 254.9քմ մակերեսով համարժեք հողամասի հետ՝ համայնքի կարիքների համար օգտագործելու նպատակով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ և 68-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ բաժնի պահանջներով.

1.Աճուրդային կարգով օտարել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում չդասվող հողամասերը՝ համաձայն հավելվածի:
2.Աճուրդի մասնակցության նախավճարի չափը սահմանել մեկնարկային գնի 50%-ի չափով:
3.Աճուրդի դրված հողամասի մեկ քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով:
4.Սույն որոշման գործողության ժամկետը սահմանել 6(վեց) ամիս:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՉ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԳՈՒՐԳԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1]-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ բաժնի 46.2-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով.

1.Ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի ցանկում ընդգրկված, բնակավայրերի նպատակային նշանակության Հրազդան քաղաքի Միկրոշրջան թաղամասի 8-րդ փողոց 6/10 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման հողամասը՝ 20.0քմ մակերեսով (տնտեսական շինություն կառուցելու նպատակով), 50 000 (հիսուն հազար) դրամ տարեկան վարձավճարով, 20 (քսան) տարի ժամկետով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117/

Լսեցին

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Սվետլանա Սավարշի Օհանովայի 2024 թվականի մայիսի 23-ի N 4132 դիմումը.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Կենտրոն թաղամասի 38 շենքի 72,05 քառակուսի մետր մակերեսով N 45 բնակարանն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 24062024-07-0073, տրված՝ 24 հունիսի 2024 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Արկադի Յուրիկի Օհանովին (ծնված՝ 27 հունվարի 1956 թվականին, անձնագիր՝ N AX0247180, տրված՝ 07 մայիսի 2024 թվականին,049-ի կողմից):
2. Համասեփականատեր ճանաչել՝ Սվետլանա Սավարշի Օհանովային - կինը (ծնված՝ 02 հունիսի 1958 թվականին, անձնագիր՝ N AR0585435, տրված՝ 08 փետրվարի 2018 թվականին, 049-ի կողմից):
3. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 10 տարվա ընթացքում

գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Համլետի Իսունցի 2024 թվականի մայիսի 29-ի N 4217 դիմումը.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող Միկրոշրջան թաղամասի 72 շենքի 56.05 քառակուսի մետր մակերեսով N 38 բնակարանն (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 24062024-07-0143, տրված՝ 24 հունիսի 2024 թվականին) անհատույց օտարել գույքը տիրապետող Ծաղիկ Բաբայի Իսունցին (ծնված՝ 26 հունիսի 1946 թվականին, անձնագիր՝ N AS0426089, տրված՝ 13 նոյեմբերի 2018 թվականին,049-ի կողմից):
2. Համասեփականատեր ճանաչել՝ Արթուր Համլետի Իսունցին- որդին (ծնված՝ 08 հունիսի 1972 թվականին, նույնականացման քարտի համարը՝ 004804118, տրված՝ 18 հուլիսի 2014 թվականին, 049-ի կողմից):
3. Սահմանել, որ սեփականության իրավունքի գրանցման պահից 10 տարվա ընթացքում գույքն օտարելու դեպքում անհրաժեշտ է Հրազդանի համայնքապետարանի համաձայնությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիների 2024 թվականի դիմումները.

1.Հրազդան համայնքում գործող համատիրություններին անհատույց օտարել Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող 0,4 մմ հաստությամբ ցինկապատ ալիքավոր

(պրոֆնաստիլ) 3620.39 (երեսունվեց հազար քսան ամբողջ երեսունինը) քառակուսի մետր թիթեղ բազմաբնակարան շենքերի տանիքները վերանորոգելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի N 112 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով «Հայի բռունցք» հասարակական կազմակերպության հիմնադիր նախագահ Գարիկ Աղասյանի 2024 թվականի N 4840 դիմումը.

1.Հրազդան համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 14-ի «Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» N112 որոշման 1-ին կետում «153,45» թվերը փոխարինել «41,03» թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 121/

Լսեցին
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳԵՂԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Հրազդան մասնաճյուղի կառավարիչ Գևորգ Մարգարյանի 2024 թվականի հուլիսի 03-ի N 5141 դիմումը.

1. Հրազդան համայնքի սեփականություն հանդիսացող (սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ N2149466) Հրազդան համայնքի Կենտրոն թաղամաս Սահմանադրության հրապարակ N1 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկից 1 քառակուսի մետր մակերեսով տարածքը 5 (հինգ) տարի ժամկետով տրամադրել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Հրազդան մասնաճյուղին՝ բանկոմատ տեղադրելու համար:

2. Վարձավճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 30.000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 122/

Ավագանու անդամներ՝

ՍԱՖԱՐՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ

ԲԱԴԱԼՅԱՆ ԹԵՀՄԻՆԵ

ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ՂԱՋԱՐՅԱՆ ԱՆԻ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ՀԱԿՈԲՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՄԱԼՅԱ

ՍԻՐՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ԳԵՎՈՐԳ

ԱՍՐՅԱՆ ԱՇՈՏ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Վ. ՍԱՖԱՐՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ռ. Դանիելյանը

Հավելված N1

Հրազդան համայնքի ավագանու
09 հուլիսի 2024 թվականի
N 109 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հրազդան համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի (այսուհետ՝ ԿԵԽՄ-ի) ձևավորման, գործունեության և այդ մարմնին անդամակցելու հետկապված հարաբերությունները և հիմնական պահանջները:

2. Սույն կարգը նպատակ ունի սահմանելու համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող ԿԵԽՄ-ի ձևավորման և գործունեության հստակ, արդյունավետ գործիքակազմեր՝ ապահովելով փոխադարձ կապն ու համագործակցությունը, մի կողմից, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների և, մյուս կողմից, համայնքում քաղաքականություն մշակող և որոշում ընդունող տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ-եր) միջև:

3. Սույն կարգի խնդիրներն են.

1) սահմանել ԿԵԽՄ-ի գործունեության նպատակները, խնդիրները և գործառույթները.
2) սահմանել ԿԵԽՄ-ի ձևավորման, անդամների ընտրության մոտեցումները և գործունեության կարգը.
3) ամրագրել ԿԵԽՄ-ի գործունեությանն առնչվող կողմերի դերերը և գործառույթները.
4) սահմանել այլ մարմինների հետ ԿԵԽՄ-ի հարաբերությունները.
5) սահմանել ԿԵԽՄ-ի գործունեության դադարեցման, ինչպես նաև սույն կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու վերաբերյալ կարգավորումները:

II. ԿԵԽՄ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4.ԿԵԽՄ-ը համայնքի ղեկավարին կից, հասարակական կարգով գործող մարմին է, որի միջոցով ապահովվում է համայնքի բնակիչների կին ներկայացուցիչների և երիտասարդների մասնակցությունը համայնքի տեղական ինքնակառավարմանը և համայնքային խնդիրների լուծմանը: ԿԵԽՄ-ը, որպես քաղաքացիական հասարակության միավորված խումբ՝ համայնքային նշանակության հանրային հարցերի շուրջ կարող է խորհրդատվություն, եզրակացություններ և առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին՝ այդպիսով ակտիվ մասնակցություն ունենալով համայնքում տեղական ինքնակառավարմանը վերաբերող քաղաքականությունների մշակման, որոշումների ընդունման և դրանց իրականացման արդյունքների մոնիթորինգի և գնահատման գործընթացներին:

5. ԿԵԽՄ-ի գործունեության նպատակն է՝ նպաստել համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացմանը, համայնքային նշանակության հանրային խնդիրների լուծմանը՝ ապահովելով համայնքի քաղաքացիական ակտիվություն ցուցաբերող կանանց և երիտասարդների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը:

6. ԿԵԽՄ-ի խնդիրներն են.

1) մասնակցել համայնքի տեղական ինքնակառավարմանը և համայնքի գործերի կառավարմանը.
2) տրամադրել խորհրդատվություն համայնքի ղեկավարին՝ համայնքի խնդիրների լուծման, համայնքի զարգացման ուղղությունների սահմանման, համայնքի կանանց և երիտասարդությանը վերաբերող ծրագրերի իրագործման և այլնի վերաբերյալ. .
3) ապահովել տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության մասնակցությունն ու նրանց ձայնի հասանելիությունը համայնքի ՏԻՄ-երին.
4) հանրային վերահսկողություն իրականացնել համայնքի ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ:

III ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. ԿԵԽՄ-ի գործառույթներն են.

1) ապահովել համայնքի բնակիչների իրազեկությունը ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ.
2) աջակցել և մասնակցել համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, համայնքի տարեկան բյուջեի, համայնքի տարեկան աշխատանքային պլանի և այլ ծրագրային փաստաթղթերի մշակման, քննարկման, իրականացման և

վերահսկման, ինչպես նաև կատարողականի և հաշվետվության աշխատանքներին.

3) առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին համայնքին կառավարմանը առնչվող և տեղական ինքնակառավարման օրենսդրությամբ համայնքի ղեկավարի համար սահմանված ըստ բնագավառների լիազորությունների իրականացմանը առնչվող կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի վերաբերյալ.
4) բացահայտել համայնքի կին բնակիչների և երիտասարդությանը վերաբերող հանրային կարևորություն և հնչեղություն ունեցող հարցերն ու խնդիրները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
5) ուսումնասիրել և քննարկել համայնքի բնակիչների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցերը և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել համայնքի ղեկավարին.
6) իրականացնել հանրային վերահսկողություն և մշտադիտարկում համայնքի ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ.
7) ապահովել հարթակ,մի կողմից, համայնքի ղեկավարի, համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների համար և, մյուս կողմից,համայնքի բնակիչների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև կապի և երկխոսության համար.
8) հետևել ԿԵԽՄ-ի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված առաջարկությունների ընդունման և կատարման աշխատանքների ընթացքին, չընդունվելու դեպքում՝ բացահայտել մերժման պատճառները և հիմնավորումները.
9) աջակցել և խորհրդատվություններ տրամադրել ԿԵԽՄ-ի կողմից ընդունելի՝ համայնքի ՏԻՄ-երին օրենսդրությամբ վերապահված այլ լիազորությունների իրականացմանն աջակցող այլ գործառույթներ և այլն:

IV. ԿԵԽՄ-Ի ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.ԿԵԽՄ-ի կազմը և ձևավորումը իրականացվում է ստորև սահմանված կարգով.

1) ԿԵԽՄ-ին կարող են անդամակցել համայնքի 16 տարին լրացած բնակիչները.

2) ԿԵԽՄ-ը կարող են ունենալ առավելագույնը մինչև 50 անդամ.

3)ԿԵԽՄ-ը ձևավորված են համարվում, եթե նշանակված է տվյալ ԽՄ-ի առնվազն 10 անդամ.

4)ԿԵԽՄ-ն ունի նախագահ և քարտուղար: Նախագահը և քարտուղարը ԿԵԽՄ-ի անդամ չեն համարվում:

10.ԿԵԽՄ-ի կազմում, իրենց համաձայնությամբ, կարող են ներգրավվել.

1) համայնքում իրականացվող տեղական ինքնակառավարման գործընթացներով հետաքրքրված կին բնակիչները.
2) համայնքի երիտասարդության ներկայացուցիչները.
3) համայնքի ավագանու անդամներ.
4) համայնքային հայեցողական կամ վարչական պաշտոններ զբաղեցնող անձինք.
5) համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողներ և մասնագետներ.
6) քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և խմբերի ներկայացուցիչներ.
7) տարածքային կառավարման և պետական կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների կամ ստորաբաժանումների ներկայացուցիչներ.
8) տեղական ինքնակառավարման հարցերով և այլ ոլորտային փորձագետներ.
9) այլ շահագրգիռ անձիք:

11.ԿԵԽՄ-ի կազմում՝ յուրաքանչյուր կազմակերպությունից կամ խմբերից կարող է ներգրավվել մեկ անդամ:

12.ԿԵԽՄ-ը ձևավորվում են սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու ամսվա ընթացքում:

13.ԿԵԽՄ-ը իր գործունեությունը իրականացնում է մինչև գործող համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետի ավարտը, կամ եթե վաղաժամկետ դադարել, դադարեցվել է վերջինիս լիազորությունները:

14.Նորընտիր համայնքի ղեկավարն իր լիազորությունները ստանձնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ձևավորում է նոր կազմով ԿԵԽՄ-ն:

15.ԿԵԽՄ-ի անդամ չեն կարող լինել.
1) դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձինք.
2) հանցագործության համար դատապարտված անձինք, ովքեր իրենց պատիժը կրում են քրեակատարողական հիմնարկներում.
3) զինված ուժերի ժամկետային զինծառայողները:

16.ԿԵԽՄ-ի անդամների նշանակումը կատարվում է հետևյալ կարգով.

1)ԿԵԽՄ-ի անդամներին նշանակում է համայնքի ղեկավարը՝ համապատասխան որոշմամբ.

2)ԿԵԽՄ-ի անդամները նշանակվում են մինչև համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետի ավարտը.

3)համայնքի նորընտիր ղեկավարը, նոր կազմով ԿԵԽՄ-ն ձևավորելիս,կարող է վերանշանակել ԿԵԽՄ-ի անդամներին՝ վերջիններիս համաձայնությամբ:

17. ԿԵԽՄ-ի անդամների թեկնածուների առաջադրումը կատարվում է հետևյալ կարգով.

1) համայնքի ավագանու անդամի թեկնածուին առաջադրում է համայնքի ավագանին՝ իր որոշմամբ (թեկնածուի համաձայնությամբ).
2) համայնքային հայեցողական կամ վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց, համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի թեկնածուին առաջադրում է համայնքի ղեկավարը (թեկնածուի համաձայնությամբ).
3) ԿԵԽՄ-ի մյուս անդամների թեկնածուներին առաջադրում է ԽՄ-ի անդամների ընտրության նպատակով համայնքի ղեկավարի կողմից ձևավորված հանձնաժողովը՝ դիմում ներկայացրած անձանց կազմից:

18.ԿԵԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի, համայնքային հայեցողական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի) թեկնածուների ընտրությունը կատարվում է հրապարակային հայտարարության հիման վրա դիմումներ ներկայացրած անձանց կազմից: Հայտարարությունը տրվում է սույն կարգն ընդունելու վերաբերյալ ավագանու որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար: Համայնքի պաշտոնական ինտերնետային (համացանցային) կայքի առկայության դեպքում հայտարարությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն): Հայտարարության մեջ նշվում է, ԿԵԽՄ-ին անդամակցելու համար հրավերը, հայտերի ներկայացման կարգը, ձևը և ժամկետները: ԿԵԽՄ-ին անդամակցելու դիմումի ձևը սահմանված է սույն որոշման հավելված 2-ում:

19. ԿԵԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի, համայնքային հայեցողական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձանց և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի) թեկնածուների ընտրության նպատակով հանձնաժողովի կողմից անց է կացվում հարցազրույց:

Հանձնաժողովը նախագահում է համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի կազմում կարող են ներգրավվել համայնքի աշխատակազմի, համայնքային ենթակայության կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Հանձնաժողովը կարող է ունենալ երեք անդամ՝ ներառյալ նախագահը:

20.ԿԵԽՄ-ի անդամների (բացառությամբ համայնքի ավագանու անդամի, համայնքային հայեցողական և վարչական պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձնաց և համայնքի աշխատակազմի և (կամ) համայնքային ենթակայության կազմակերպությունների համայնքային ծառայողի կամ մասնագետի) թեկնածուների ընտրության ժամանակ կարող են հաշվի առնվել հետևյալ չափանիշները.

1) թեկնածուի կրթական ցենզը.
2) համայնքի բնակչության տարբեր խմբեր ներկայացնող անձանց, մասնավորապես՝ կանանց և երիտասարդների ներկայացուցչության ապահովումը.
3) հասարակական հիմունքներով կամ կամավորության սկզբունքով աշխատանքներ կատարելու նախկին փորձը.
4) բազմաբնակավայր համայնքի դեպքում՝ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ներկայացուցչության ապահովումը.
5) հարցազրույցի արդյունքները:

21.ԿԵԽՄ-ին անդամագրվելու դիմում ներկայացրած այն անձինք, ովքեր չեն ընտրվել և չեն նշանակվել որպես ԿԵԽՄ-ի անդամ, համայնքի աշխատակազմի կողմից գրանցվում են դիմում ներկայացրած անձանց ռեզերվում:

22. ԿԵԽՄ-ի անդամների գործունեությունը այն իրականացնելու ընթացքում հնարավոր է դադարեցվեն:

23. ԿԵԽՄ-ի անդամի գործունեությունը դադարեցվում է համայնքի ղեկավարի որոշմամբ, եթե ԿԵԽՄ-ի անդամը.

1) դիմում է ներկայացրել ԿԵԽՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ.
2) երեք անգամ անընդմեջ, անհարգելի պատճառով չի մասնակցել ԽՄ-ի նիստերի աշխատանքին.
3) սույն կարգի 15-րդ կետով սահմանված դեպքերի առաջացման պայմաններում.
4) մահացել է:

24. Եթե ԿԵԽՄ-ի անդամի գործունեության դադարեցման հետևանքով ԿԵԽՄ-ի անդամնե16ը նվազել է տասից, ապա համայնքի ղեկավարը 15 օրվա ընթացքում նշանակում է նոր անդամ՝ դիմում ներկայացրած անձանց ռեզերվից կամ, եթե դա հնարավոր չէ, ապա 15 օրվա ընթացքում նոր տրված հայտարարության հիման վրա դիմում ներկայացրած անձանց կազմից:

25.Եթե ԿԵԽՄ-ի անդամ հանդիսացող ավագանու ներկայացուցիչը կամ համայնքի աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպությունների

ներկայացուցիչը դադարեցնում է գործունեությունն իր պաշտոնում, նա կարող է շարունակել անդամակցել ԽՄ-ին:

26.ԿԵԽՄ-ի նախագահը՝ համայնքի ղեկավարն է: Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ, ԽՄ-ի նախագահի գործառույթներն իրականացնում է համայնքի ղեկավարի տեղակալը:

27.ԿԵԽՄ-ի քարտուղարը համայնքի աշխատակազմի քարտուղարն է կամ նրա կողմից նշանակված համայնքի աշխատակազմի ներկայացուցիչը:

V. ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ԿԵԽՄ-ի գործունեության բնագավառներն են՝

28.ԿԵԽՄ-ի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են անձամբ՝ հասարակական հիմունքներով:

29.ԿԵԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը կազմակերպում է համայնքի աշխատակազմի քարտուղարը:

30.ԿԵԽՄ-ի գործունեության ապահովման և նիստերի կազմակերպման և անցկացման համար՝ համայնքի ղեկավարը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ է (նիստերի սենյակ, աշխատասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն):

31.ԿԵԽՄ-ի նիստերը գումարվում են՝

1) առնվազն երեք ամիսը մեկ անգամ.

2) անհրաժեշտության դեպքում՝ ԿԵԽՄ-ի անդամների նախաձեռնությամբ և համայնքի ղեկավարի համաձայնությամբ, կարող են հրավիրվել արտահերթ նիստեր:

32. ԿԵԽՄ-ի նիստերը հրավիրում և վարում է ԿԵԽՄ-ի նախագահը:

33. ԿԵԽՄ-ի նիստի ամսաթիվը որոշում է ԿԵԽՄ-ի նախագահը:

34. ԿԵԽՄ-ի առաջին նիստը գումարվում է ԿԵԽՄ-ի անդամներին նշանակելու մասին համայնքի ղեկավարի որոշումն ընդունելուց հետո 20 օրվա ընթացքում:

35. ԿԵԽՄ-ի նիստերը կազմակերպվում և անց են կացվում համայնքի ՏԻՄ-երի նստավայրում կամ համայնքի ղեկավարի որոշմամբ մեկ այլ վայրում՝ արտագնա նիստ գումարելու միջոցով:

36. ԿԵԽՄ-ի նիստի վայրը, ամսաթիվը և քննարկման ենթակա հարցերի օրակարգը հրապարակվում են նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ: Նշյալ տեղեկատվությունը փակցվում է ՏԻՄ-երի նստավայրում, ինչպես նաև այն վայրերում, որոնք հասանելի են համայնքի յուրաքանչյուր մասի բնակչի համար՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

37. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայության դեպքում,վերոնշյալ տեղեկատվությունը պարտադիր կերպով տեղադրվում է այդ կայքում, ինչպես նաև կարող է տարածվել տեղական զանգվածային լրատվության միջոցներով, տեղական հեռուստատեսությամբ և ժամանակակից հեռահաղորդակցության այլ միջոցներով (հեռախոսազանգերով, կարճ (SMS) հաղորդագրություններով և այլն):

38.ԿԵԽՄ-ի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ԿԵԽՄ-ի անդամների թվի կեսից ավելին:

39. Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում տվյալ նիստի իրավազորությունը, կամ նիստին չի ներկայանում ԿԵԽՄ-ի նախագահը և նիստը չի սկսվում, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ԿԵԽՄ-ի՝ նիստին ներկայացած անդամները:

40. ԿԵԽՄ-ի նիստը տևական է և շարունակվում է մինչև օրակարգի սպառումը:

41.ԿԵԽՄ-ի նիստն արձանագրվում է ԿԵԽՄ-ի քարտուղարի կողմից:

42.ԿԵԽՄ-ի նիստերը դռնբաց են: ԿԵԽՄ-ի նիստին կարող են հրավիրվել տվյալ նիստի օրակարգի նախագծում ընդգրկված հարցերին առնչվող անձիք, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և այլն:

43.ԿԵԽՄ-ի անդամը՝ ԽՄ-ի նախագահի կողմից կարող է հեռացվել ԽՄ-ի նիստից՝ նիստի աշխատանքները խոչընդոտելու դեպքում:

44.ԽՄ-ի նիստի օրակարգը սահմանվում և իրականացվում է հետյալ կարգով.

1)ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը կազմում է համայնքի ղեկավարը.

2)ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը ձևավորվում է ԿԵԽՄ-ի քարտուղարին նիստից առնվազն հինգ աշխատանքային օր առաջ ներկայացված գրավոր հարցերից: Հարցեր կարող են ներկայացնել նաև ԿԵԽՄ-ի բոլոր անդամները.

3)ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագիծը, քննարկվող հարցերի վերաբերյալ կից փաստաթղթերը ԿԵԽՄ-ի քարտուղարը ներկայացնում է ԽՄ-ի անդամներին նիստից առնվազն երկու աշխատանքային օր առաջ:

45.ԿԵԽՄ-ի նիստի օրակարգի նախագծում նշվում են.

1) նիստի անցկացման վայրը, ամսաթիվը և ժամը.
2) քննարկման ենթակա հարցերը.
3) քննարկվող յուրաքանչյուր հարցի զեկուցողի անունը և ազգանունը:

46.ԿԵԽՄ-ի նիստն սկսվում է ԽՄ-ի նիստի օրակարգի հաստատումով՝ ԽՄ-ի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

47. ԿԵԽՄ-ը՝ սույն կարգով սահմանված գործառույթների և գործունեության բնագավառների հարցերի շուրջ կազմում և ընդունում է որոշումներ:

48. ԿԵԽՄ-ի որոշումներն ընդունվում են եզրակացությունների և (կամ) առաջարկությունների ձևով, որոնք ներկայացվում են համայնքի ղեկավարին:

49. ԿԵԽՄ-ի որոշումը համայնքի ղեկավարի համար կրում են խորհրդատվական բնույթ: ԿԵԽՄ-ի որոշումների հիման վրա համայնքի ղեկավարը կարող է ընդունել համապատասխան որոշումներ:

50.ԿԵԽՄ-ի որոշումն ընդունվում է տվյալ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ հավասար ձայների առկայության դեպքում վճռորոշ է ԿԵԽՄ-ի՝տարեց անդամի ձայնը:

51. ԿԵԽՄ-ի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

52. ԿԵԽՄ-ի նախագահը ունի խորհրդակցական ձայնի իրավունք:

53. ԿԵԽՄ-ի որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ԽՄ-ի անդամների անունները և ազգանունները:

54. ԿԵԽՄ-ի որոշումը ստորագրում են ԿԵԽՄ-ի նիստին ներկա անդամները:

55.ԿԵԽՄ-ի նիստերի ընթացքում կազմվում են արձանագրություններ:

56. ԿԵԽՄ-ի նիստերն արձանագրվում են ԿԵԽՄ-ի քարտուղարի կողմից:

57. Նիստի արձանագրությունը ներառում է.

1)նիստի անցկացման վայրը և ամսաթիվը.

2)նիստին մասնակցած ԿԵԽՄ-ի անդամների, հրավիրված անձանց անունները և ազգանունները.

3)նիստի օրակարգը.

4)քննարկված հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5)ընդունված որոշումները, դրանց ներկայացման և հրապարակման ձևերը.

6)ընդունված որոշումներին դեմ քվեարկածների հատուկ կարծիքները(եթե այդպիսիք կան):

58. Նիստի արձանագրությանը կցվում են ԿԵԽՄ-ի քննարկմանը դրված նյութերը, ուսումնասիրությունները, լուսանկարները, տեսանյութերը և այլն:

59. ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրությունները ստորագրում է ԽՄ-ի քարտուղարը: ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրությունները ենթակա են հրապարակման:

VI. ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

60. ԿԵԽՄ-ի գործունեությանը առնչվող՝ համայնքի ավագանու գործառույթներն հետևյալն են.

1) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, հաստատում է սույն կարգը.
2) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, փոփոխություններ և (կամ) լրացումներ է կատարում սույն կարգի մեջ կամ դադարեցնում է սույն կարգի գործողությունը.
3) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ծանոթանում է ԿԵԽՄ-ի ուսումնասիրությունների, եզրակացությունների և առաջարկությունների հետ.

4) համայնքի ղեկավարի ներկայացմամբ, ԿԵԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա ընդունում է համապատասխան որոշումներ.
5) կարող է համայնքի ղեկավարից պահանջել տեղեկանքներ համայնքի տարածքում գործող ԿԵԽՄ-ի գործունեության վերաբերյալ:

61. ԿԵԽՄ-ի գործունեությանը առնչվող՝ համայնքի ղեկավարի գործառույթներն են.
1) առաջարկություն է ներկայացնում համայնքի ավագանուն՝ համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող ԿԵԽՄ-ի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու վերաբերյալ.
2) առաջարկությունէ ներկայացնում համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը.
3) ձևավորում է ԿԵԽՄ-ի անդամների ընտրության հանձնաժողով.
4) նշանակում է ԿԵԽՄ-ի անդամներին.
5) դադարեցնում է ԿԵԽՄ-ի անդամների լիազորությունները.
6) կազմակերպում, ղեկավարում և նախագահում է ԿԵԽՄ-ի գործունեությունը.
7) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ԿԵԽՄ-ի՝ սույն կարգով նախատեսված գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման ու անցկացման համար.
8) հրավիրում և վարում է ԿԵԽՄ-ի նիստերը.
9) որոշում է ԿԵԽՄ-ի նիստերին հրավիրվող անձանց կազմը.
10) ձևավորում է ԿԵԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերը.
11) ծանոթանում է ԿԵԽՄ-ի ուսումնասիրություններին, եզրակացություններին և առաջարկություններին.
12) ԿԵԽՄ-ի եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա նախաձեռնում է անհրաժեշտ գործողություններ, ընդունում է որոշումներ կամ առաջարկություններ է ներկայացնում համայնքի ավագանուն համապատասխան որոշումներ ընդունելու համար:

62. ԿԵԽՄ-ի գործունեությանը առնչվող՝ համայնքի աշխատակազմի քարտուղարի գործառույթներն են.
1) կազմակերպում է ԿԵԽՄ-ի գործունեության տեղեկատվական և մասնագիտական ապահովումը, աջակցում է ԿԵԽՄ-ի գործունեությանը, նիստերի կազմակերպմանը և անցկացմանը.
2) իրականացնում է ԿԵԽՄ-ի քարտուղարի գործառույթները անձամբ կամ նշանակում է ԿԵԽՄ-ի քարտուղարին:

63. ԿԵԽՄ-ի քարտուղարի գործառույթներն են.

1) հարցեր է ընդունում ԿԵԽՄ-ի անդամներից՝ նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
2) ապահովում է ԿԵԽՄ-ի կազմակերպչա-տեխնիկական աշխատանքների իրականացումը.
3) ապահովում է ԿԵԽՄ-ի անդամների և նիստերին հրավիրված անձանց իրազեկումը նիստերի անցկացման օրվա, ժամի, վայրի և քննարկվող հարցերի մասին.
4) վարում է ԿԵԽՄ-ի գործավարությունը.
5) կազմում և ստորագրում է ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրությունները.
6) ապահովում է ԿԵԽՄ-ի գործունեության, ընդունված որոշումների հրապարակայնությունը:

64.ԿԵԽՄ-ի անդամների գործառույթներն են.

1) մասնակցում են ԿԵԽՄ-ի նիստերին.
2) հարցեր են ներկայացնում ԿԵԽՄ-ի նիստերի օրակարգերի նախագծերում ընդգրկելու համար.
3) ներկայացնում են բանավոր կամ գրավոր կարծիք ԿԵԽՄ-ի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ.
4) մասնակցում են ԿԵԽՄ-ի որոշումների ընդունման քվեարկությանը.
5) ստորագրում են ԿԵԽՄ-ի որոշումները.
6) ծանոթանում են ԿԵԽՄ-ի նիստերի արձանագրություններին.
7) կատարում են ԿԵԽՄ-ի որոշումներից բխող կամ ԿԵԽՄ-ի նախագահի կողմից տրված հանձնարարականներ:

VII. ՍՈՒՅՆ ԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

65. Սույն կարգը վերանայվում է համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ: Համայնքի ղեկավարը կարող է առաջարկություններ ներկայացնել համայնքի ավագանուն՝ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու սույն կարգում կամ դադարեցնելու դրա գործողությունը:

66. Սույն կարգի մեջ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումը, գործողության դադարեցումը, համայնքի ղեկավարի ներկայացմամբ, իրավասու է կատարել միայն համայնքի ավագանին՝ իր համապատասխան որոշմամբ:

IX. ԿԵԽՄ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

67.Համայնքում գործող ԿԵԽՄ-ի գործունեությունը դադարեցվում է.

1) երբ լրացել է համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը կամ վաղաժամ դադարել, դադարեցվել է.
2) օրենքի ուժով համայնքը վերակազմակերպվել է:

Հավելված N2

Հրազդան համայնքի ավագանու

09 հուլիսի 2024 թվականի

N109 որոշման

ԴԻՄՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ

Անձնական տվյալներ

....

անուն ազգանուն հայրանուն ծննդյան օր, ամիս, տարի

ՈվէառաջադրելՁերթեկնածությունը

☐ Ինքնառաջադրում ☐ .....

Ձեր թեկնածությունն առաջադրող կազմակերպության կամխմբիանվանումը

Սեռ

☐ արական ☐ իգական

Հասցե

փաստացի բնակության .....

հաշվառման .....

Հեռախոս

աշխ: ..... տուն: ..... բջջ: .....

Էլեկտրոնային հասցե

.....

Դուք համայնքի բնակի՞չ եք

☐ այո ☐ ոչ

որքան ժամանակ

.....

Կրթություն

☐ **բարձրագույն** ☐ **միջնակարգ** ☐ **այլ**

Ազգություն

.....

Մասնագիտություն

1. ....

2. ....

Նշեք այն խորհրդակցական մարմնի անվանումը, որին ցանկանում եք անդամակցել

.....

Դուք հանդիսանում եք

☐ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կամխմբերիներկայացուցիչ

☐ մասնավոր հատվածի կազմակերպությունների կամ խմբերի ներկայացուցիչ

☐ պետական կառավարման կամ տարածքային կառավարման մարմինների՝ համայնքի տարածքում գործող տարածքային ծառայությունների ներկայացուցիչ

☐ փորձագետ

☐ ակտիվ բնակիչ

☐ այլ շահագրգիռ անձ

Նշեք Ձեր ընթացիկ աշխատանքը/զբաղեցրած պաշտոնը

.....

Նշեք, թե ինչ հասարակական գործունեությամբ եք զբաղվում (օրինակ, որևէ հասարակական կազմակերպության կամ նրա խորհրդի անդամ եք)

.....

.....

Արդյո՞ք նախկինում եղել եք համայնքի ավագանու, աշխատակազմի կամ համայնքային ենթակայության կազմակերպության ներկայացուցիչ, հասարակական կարգով գործող որևէ մարմնի անդամ

☐ այո ☐ ոչ

նկարագրություն

.....

Արդյո՞ք Ձեր ունեցած աշխատանքային փորձը կամ մասնագիտությունը առնչվում է Ձեր կողմից ընտրված ԿԵ խորհրդակցական մարմնի գործունեության ուղղվածությանը

.....

.....

Անդամակցե՞լ եք արդյոք նախկինում համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող որևէ խորհրդակցական մարմնի

☐ այո ☐ ոչ

որքան ժամանակ

.....

.....

.....

խորհրդակցական մարմնի անվանումը

.....

.....

Տեղեկացվա՞ծ եք արդյոք համայնքի ղեկավարին կից ձևավորվող ԿԵ խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգին և ի վիճակի՞ եք արդյոք մասնակցել այդ մարմնի աշխատանքներին

տեղեկացված եք

☐ այո ☐ ոչ

կարող եք մասնակցել

☐ այո ☐ ոչ

Ինչու՞ եք հետաքրքրված ԿԵ խորհրդակցական մարմնին անդամակցելու մասով

.....

.....

Այլ տեղեկատվություն կամ հաղորդագրություն, որ կցանկանայիք ուղղել համայնքի ղեկավարին

.....

Դիմող՝ .....

(Անուն, ազգանուն, հայրանուն)

«.....» «.....» «2024թ. »

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հրազդան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 34-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի կարգավորումների համատեքստը: Սույն որոշման ընդունման անհրաժեշտությունը կայանում է նրանում, որ համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վերապահված լիազորությունների իրականացման շրջանակում, համայնքի բնակչությունը՝ այդ թվում կանայք և երիտասարդները բերեն իրենց մասնակցությունն ու աջակցությունը:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-մասի 34-րդ կետի պահանջներին համապատասխան, համայնքի ավագանին սահմանում է համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը, խորհրդակցական մարմինների տեսակները և անվանումները:

Ըստ էության համայնքի ավագանու կողմից ընդունվող վերը մեջբերված որոշումը կրում է շրջանակային բնույթ և հնարավորություն է տալիս համայնքի ղեկավարին և համայնքի ավագանուն, համայնքի տեղական ինքնակառավարմանը վերաբերող բնագավառների և համայնքային հարցերի շրջանակներում ձևավորել տարբեր խորհրդակցական մարմիններ:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքում տեղական ինքնակառավարմանը օրենքով սահմանված կարգով մասնակցելու իրավունք ունի տվյալ համայնքի տասնվեց տարին լրացած յուրաքանչյուր բնակիչ: Սույն որոշման ընդունումը նպատակ ունի ապահովելու համայնքի երիտասարդության ներգրավմանը համայնքային հարցերի լուծման շրջանակներում, իրենց խորհրդակցական աջակցությունն բերելով համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի և Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորություններին և սկզբունքներին համապատասխան, համայնքի տեղական ինքնակառավարմանը հավասարապես պետք է մասնակցեն կանայք, նպատակ ունենալով ապահովելու տեղական ինքնակառավարման գենդերային հավասարաչափ քաղաքականության իրագործումը և որոշումների կայացման գործընթացներում կանանց ներգրավման հնարավորությունների ստեղծումը: Սույն որոշման ընդունումը մեծապես կնպաստի համայնքում՝ վերը մեջբերված քաղաքականության իրագործման մասով:

, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան** համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդների խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հրազդան համայնքի բյուջեում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: Նախագծի ընդունման կապակցությամբ կարող են ավելանալ համայնքի բյուջեի ծախսերը՝ պայմանավորված այն հանգամանքով,որ համայնքի ղեկավարը անհրաժեշտ պայմաններ (նիստերի սենյակ, աշխատասենյակ, համակարգիչ, գրասենյակային պարագաներ և այլն) պետք է ստեղծի ԿԵԽՄ-ի գործունեության իրականացման, նիստերի կազմակերպման և անցկացման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՍԵՎԱԿ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՐԱԶԴԱՆԻ ԳԱԲՐՈՆԵՐԻ և ԳՐԱՆՈԴԻՈՐԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան *25.06.2024թ.*

2024թ. հունիսի 25-ին ժամը 11:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանում (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ, շենք 1) տեղի ունեցավ «ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ կողմից ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող Հրազդանի գաբրոների և գրանոդիորիտների հանքավայրից օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ստանալու նպատակով 1-ին (առաջին) հանրային քննարկում:

Ներկա էին՝ Հրազդանի քաղաքապետարանի, ձեռնարկողի ներկայացուցիչներ, ինչպես նաև Հրազդան համայնքի բնակիչներ (մասնակիցների ցանկը ստորագրություններով կցվում է արձանագրությանը):

Բացման խոսքն ասաց Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը՝ ներկայացնելով ընկերության նպատակն ու խոսքը փոխանցեց ընկերության ներկայացուցիչներին:

Ընկերության ներկայացուցիչ Գարիկ Հարոյանը ներկայացրեց հանքավայրի տեղադիրքը, որի հարևանությամբ անցնում է էլեկտրաէներգիայի ցանց: Հաստատվել են գաբրոների և գրանոդիորիտների պաշարներ՝ որոնց օգտահանման արդյունքում կստացվի շինարարական հումք: Ընկերությունը նախատեսում է շահագործել հանքավայրը, որի համար անհրաժեշտ է համայնքի համաձայնությունը:

Ռ. Դանիելյանը հարց հնչեցրեց տարածքում առկա հնարավոր պատմամշակութային օբյեկտների վերաբերյալ, որին ի պատասխան «ԱՎԱՆԳԱՐԴ ԻՆՎԵՍԹ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը նշեց, որ տարածքում պատմամշակութային օբյեկտների առկայության վերաբերյալ ուսումնասիրություն կատարված չեն:

Ընկերության ներկայացուցիչ Ֆելիքս Փիրումյանը նշեց, որ նախագծման փուլում կհստակեցվի տարածքում առկա պատմամշակութային ժառանգության օբյեկտները:

Այն հարցին՝ արդյոք նախնական ներկայացված տեղադիրքի կոորդինատները ճշտված են, ներկայացուցիչները պատասխանեցին՝ ոչ, վերջնական ճշտումները նախատեսվում է նախագծման փուլում:

Հարց հնչեց բնապահպանական ազդեցությունների, տարածքում առկա ջրի աղբյուրների մասին: Ի պատասխան, նշվեց՝ աշխատանքները իրականացվելու են պայթեցման եղանակով, օգտագործվելու են ջրցան մեքենաներ՝ փոշու նստեցման նպատակով:

Բնակիչների շրջանում մտահոգություն եղավ փոշու բարձր ցուցանիշի մասին, քանի որ տարածքում արդեն առկա են գործող օբյեկտներ:

Հաստատված հանքավայր տանող ճանապարհն անցնելու է Հրազդան համայնքի Կաքավաձոր թաղամաս տանող ճանապարհով, որի հիմնանորոգման աշխատանքների համար Համայնքը դիմել է Տարածքային զարգացման հիմնադրամ, և հրատապ լուծում պահանջող ծրագրերի շրջանակում գործընթացը մեկնարկված է և շինարարական աշխատանքները կսկսվեն 2024 թվականի հուլիս ամսից: Իսկ հումքի տեղափոխումն իրականացվելու են ծանր տեխնիկաների միջոցով, որոնք անցնելու են նոր կառուցվող ճանապարհով: Այս և տարածքում փոշու առկայության բարձր ցուցանիշի հանգամանքները (Ցեմենտի գործարանի, այլ հանքավայրի առկայությունը) հաշվի առնելով բնակիչների շրջանում հանքավայրի շահագործման հետ կապված մտահոգությունները շատ են:

Քննարկումն ամփոփելով՝ Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռոբերտ Դանիելյանը հայտնեց համայնքի դիրքորոշումը նախատեսվող գործունեության վերաբերյալ. հաշվի առնելով տարածքում փոշու առկայության բարձր ցուցանիշի հանգամանքը, տարածքում գործող ցեմենտի գործարանի առկայությունը և դրա պատճառված վնասները Կաքավաձոր թաղամասի բնակչությանը և ոչ միայն, ինչպես նաև հիմնանորոգվող, նոր կառուցվող ճանապարհի հանգամանքը, այդ ճանապարհով նախատեսվող ծանր տեխնիկայի հետագա պատճառվող վնասները՝ համայնքը համաձայնություն չի տալիս նշված գործունեությանը:

Հանրային քննարկմանը մասնակցում էին՝ 22 անձիք:

Հրազդանի համայնքապետարանի
աշխատակազմի քարտուղար՝ Ռ. Դանիելյան

Արձանագրող՝ Վ. Բարեղամյան

Հավելված N 1
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հուլիսի 09-ի N 111-Ն
որոշման

(հազար դրամներով)

ՀՀ համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2025-2027թթ. վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների

Տող N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	2023 փաստացի			2024 հաստատված			2025 թվական			2025թ ճշգրտված և 2024թ. հաստատված տող 6ի			2026 թվական			2027 թվական			Մեկնաբանություն
			Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		Ընդամենը	այդ թվում՝		2025թ կանխատեսված և 2024թ. հաստատված բյուջեի տարբերության վերաբերյալ հիմնավորումներ
				վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	
1	2	3	4	5	6.0	7.0	8.0	9	10.0	11	12	13	14	15	16	17	18	19.0	20.0	21	22
1000	ԵՐԱՇԽԻՔԸ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ		2,921,249,149.1	2,202,102,300.1	633,614.2	3,317,985.4	2,753,642.9	564342.5	3,527,233.0	2,912,233.0	615,000.0	209,247.6	158,590.1	50657.5	3,133,225.8	2,902,325.8	230,900.0	2,987,028.5	2,926,427.2	31,200.0	
												0.0	0.0	0							
	այդ թվում՝																				
1100	1. ՍԵՓԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150), այդ թվում՝	7100	609582.9	609582.9		552,631.1	552,631.1		614,549.6	614,549.6		61,918.5	61,918.5	0	692,089.1	692,089.1		709,585.6	709,585.6		
												0.0	0.0	0							
	այդ թվում՝																				Բաղադրամ եղած պատրաստի գնալով նվազում են կապված վճարումների հետ
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող1113), այդ թվում՝	7131	142,995,392.9	142,995,392.9		159,790.5	159,790.5		24,701.6	24,701.6		(135,088.9)	(135,088.9)	0	24,596.6	24,596.6		24,596.6	24,596.6		
												0.0	0.0	0							
	այդ թվում՝																				
1111	Գույքահարկ հասանելիների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար		17589.0	17589.0		8,250.0	8,250.0		10,701.0	10,701.0		2,451.0	2,451.0	0	10671	10,671.0		10,671.0	10,671.0		
1112	Հողի հարկ հասանելիների վարչական տարածքներում գտնվող հողի համար		12365.0	12365.0		9,795.0	9,795.0		14,000.6	14,000.6		4,205.6	4,205.6	0	13,925.6	13,925.6		13,925.6	13,925.6		
1113	Հանձնման իրացումը նախատեսվող անշարժ գույքի հարկ		113041.4	113041.4		141,745.5	141,745.5		173,021.0	173,021.0		31,275.5	31,275.5	0	233,655.6	233,655.6		235,775.6	235,775.6		
1120	1.2 Գույքային հարկեր ոչ գույքից	7136	397298.2	397298.2		323,639.8	323,639.8		350,904.0	350,904.0		27,264.2	27,264.2	0	373,228.9	373,228.9		379,775.4	379,775.4		
												0.0	0.0	0							
	այդ թվում՝																				
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		397298.2	397298.2		323,639.8	323,639.8		350,904.0	350,904.0		27,264.2	27,264.2	0	373,228.9	373,228.9		379,775.4	379,775.4		
1130	1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝	7145	46846.9	46846.9		46,200.8	46,200.8		47,138.0	47,138.0		937.2	937.2	0	49,153.0	49,153.0		50,393.0	50,393.0		
												0.0	0.0	0							
	այդ թվում՝																				
11301	Հանձնման վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և դրանց հիմնական շինությունների շինարարության (ռեկոնստրուկցիայի) թույլտվության համար		4,605.0	4,605.0		3,000.0	3,000.0		4,100.0	4,100.0		1,100.0	1,100.0	0	6,000.0	6,000.0		7,000.0	7,000.0		
	9	5	1	Արտադպրոցական դաստիարակություն		242,043.2	241,743.2	300.0	328,173.0	311,963.0	16,210.0	714,503.3	314,703.3	399,800.0	386,330.3	2740.3	383,590.0	315,403.3	314,703.3	700.0	315,403.3	314,703.3	700.0		
				- Աշխատողների աշխատավարձեր և	4111	73,900.2	73,900.2		83,996.0	83,996.0		84,924.0	84,924.0		928.0	928	0.0	84,924.0	84,924.0		84,924.0	84,924.0			
				- Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ (4112)	4112	208.0	208.0								0.0	0	0.0								
				- Էներգետիկ ծառայություններ (4212)	4212	4,329.3	4,329.3		6,950.0	6,950.0		9,000.0	9,000.0		2,050.0	2050	0.0	9,000.0	9,000.0		9,000.0	9,000.0			
				- Կոմունալ ծառայություններ (4213)	4213	285.5	285.5		600.0	600.0		600.0	600.0		0.0	0	0.0	600.0	600.0		600.0	600.0			
				- Կապի ծառայություններ (4214)	4214	192.0	192.0		252.0	252.0		252.0	252.0		0.0	0	0.0	252.0	252.0		252.0	252.0			
				- Ներքին գործուղումներ (4221)	4221	288.4	288.4		450.0	450.0		550.0	550.0		100.0	100	0.0	550.0	550.0		550.0	550.0			
				- Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր (4222)	4222	200.0	200.0		200.0	200.0		300.0	300.0		100.0	100	0.0	300.0	300.0		300.0	300.0			
				Տեղեկատվական ծառայություն	4234				25.0	25.0		50.0	50.0		25.0	25	0.0	50.0	50.0		50.0	50.0			
				Ներկայացուցչական ծախսեր	4237				210.0	210.0		150.0	150.0		-60.0	-60	0.0	150.0	150.0		150.0	150.0			
				- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ (4239)	4239	273.9	273.9		600.0	600.0		600.0	600.0		0.0	0	0.0	600.0	600.0		600.0	600.0			
				- Մասնագիտական ծառայություններ (4241)	4241	281.2	281.2		802.0	802		750.0	750		-52.0	-52	0.0	750.0	750.0		750.0	750.0			
				Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	4251				1,950.0	1950		2,600.0	2600		650.0	650	0.0	2,600.0	2,600.0		2,600.0	2,600.0			

				- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում (4252)	4252	73.2	73.2		100.0	100		200.0	200		100.0	100	0.0	200.0	200.0		200.0	200.0			
				- Գրասենյակային նյութեր և հագուստ (4261)	4261	205.6	205.6		620.0	620		600.0	600		-20.0	-20	0.0	600.0	600.0		600.0	600.0			
				- Առողջապահական և լաբորատոր նյութեր (4266)	4266	69.3	69.3		140.0	140		170.0	170		30.0	30	0.0	170.0	170.0		170.0	170.0			
				- Կենցաղային և հանրային սննդի նյութեր (4267)	4267	157.6	157.6		250.0	250		280.0	280		30.0	30	0.0	280.0	280.0		280.0	280.0			
				- Հատուկ նպատակային այլ նյութեր (4269)	4269	1620.8	1620.8		2,000.00	2000		2,000.00	2000		0.0	0	0.0	2,000.0	2,000.0		2,000.0	2,000.0			
				- Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին (4511)	4511	157714.2	157714.2		202605.2	202605.2		208025.5	208025.5		5,420.3	5420.3	0.0	208,025.5	208,025.5		208,025.5	208,025.5			
				- Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին (4655)	4655	1687.2	1687.2		8,858.0	8858		2,300.0	2300		-6,558.0	-6558	0.0	2,300.0	2,300.0		2,300.0	2,300.0			
				- Պարտադիր վճարներ (4823)	4823	9.0	9.0		1354.8	1354.8		1351.8	1351.8		-3.0	-3	0.0	1,351.8	1,351.8		1,351.8	1,351.8			
				- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում (5113)	5113				250.0		250.0	399,100.0	399100		398,850.0	399100	-250.0								
				- Նախագծահետազոտական ծախսեր (5134)	5134				15370	0	15,370.0				-15,370.0	0	-15,370.0								
				Այլ մեքենաներ և	5129				90 ,0		90.0	100, 0	100		10.0	100	-90.0	100.0		100.0	100.0		100.0		
				- Վարչական սարքավորումներ (5122)	5122	300.0		300.0	500 ,0		500.0	600, 0	600		100.0	600	-500.0	600.0		600.0	600.0		600.0		
	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող 3010 + տող 3020 + տող 3030 + տող 3040 + տող 3050+ տող 3060 + տող 3070 + տող 3080 + տող 3090), այդ թվում՝		*9,165.3*	*9,165.3*		9300 ,0	9300		7300, 0	7300		-2,000.0	-2000	0.0	16,300.0	16,300.0		16,300.0	16,300.0			
	10	2	0	Ներուժություն, որից՝		*775.3*	*775.3*		*1300, 0*	*1,300.0*		1300, 0	1,300.0		0.0	0	0.0	1,300.0	1,300.0		1,300.0	1,300.0			
....	10	2	1	Ներուժություն		*775.3*	*775.3*					1300, 0	1,300.0		1,300.0	1300	0.0	1,300.0	1,300.0		1,300.0	1,300.0			
....				- Գույքի և սարքավորումների վարձակալություն (4216)	4216	*775.3*	*775.3*		*1000, 0*	*1,000.0*		1,000.0	1,000.0		0.0	0	0.0	1,000.0	1,000.0		1,000.0	1,000.0			
				- Հատուկ նպատակային այլ նյութեր (4269)	4269				*300,0*	*300.0*		300.0	300.0		0.0	0	0.0	300.0	300.0		300.0	300.0			
	10	7	0	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) , որից՝		8,390.0	8,390.0		8,000.0	8,000.0		6,000.0	6,000.0		-2,000.0	-2000	0.0	15,000.0	15,000.0		15,000.0	15,000.0			
	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)		8,390.0	8,390.0		8,000.0	8,000.0		6,000.0	6,000.0		-2,000.0	-2000	0.0	15,000.0	15,000.0		15,000.0	15,000.0			
				Հոտարկավորության նպաստներ բյուջեից	4726				1,000.0	1,000.0		1,000.0	1,000.0		0.0	0	0.0	2,000.0	2,000.0		2,000.0	2,000.0			
				- Այլ նպաստներ բյուջեից (4729)	4729	8,390.0	8,390.0		7000 ,0	7,000.0		5,000.0	5,000.0		-2,000.0	-2000	0.0	13,000.0	13,000.0		13,000.0	13,000.0			
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝			145,000.0		153,005.2	153,005.2		159,157.7	159,157.7		6,152.5	6152.536	0.0	153,712.0	153,712.0		162,587.8	162,587.8			
	11	1	0	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ			145,000.0		153,005.2	153,005.2		159,157.7	159,157.7		6,152.5	6152.536	0.0	153,712.0	153,712.0		162,587.8	162,587.8			
....	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ			145,000.0								0.0	0	0.0								
....	11	1	2	- Պահուստային միջոցներ (վարչական բյ.) (4891)	4891	-145,000.0			153,005.2	153,005.2		159,157.7	159,157.7		6,152.5	6152.536	0.0	153,712.0	153,712.0		162,587.8	162,587.8			

Հավելված 4
Հրազդան համայնքի ավագանու
2024 թվականի հուլիսի 9-ի N 111-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 -2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1.8-րդ կետի, համայնքի ղեկավարը կազմում և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրի (այսուհետ՝ ՄԺԾԾ) նախագիծը: Հրազդան համայնքի 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին Հրազդան համայնքի ավագանու որոշման նախագիծը մշակվել է «Տեղական ինքնակառավարման մասին» և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքների պահանջներին համապատասխան:

2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը, լինելով համայնքի եկամուտների ձևավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագրերի ուղենիշային փաստաթուղթ, ուղղվում է տեղական ինքնակառավարման մարմիններին՝ օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը: «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հաստատելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է եկամուտների և ծախսերի արդյունավետ կառավարում: Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը համայնքի հնգամյա զարգացման ծրագրի դրույթների իրագործման հիմնական գործիքն է, որը հնարավորություն է տալիս առավել իրատեսական և առարկայական դարձնել նախատեսվող ծրագրերը: Այն հստակեցնում է եռամյա ժամանակահատվածում համայնքի ծախսային քաղաքականությունը տարեկան կտրվածքով՝ հնարավորություն տալով համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները և ստեղծելու պատշաճ ծրագրային հիմքեր առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար: Համայնքային ոլորտային գերակայությունները որոշվում են ինչպես համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի գերակայությունների, այնպես էլ ՀՀ կառավարության ծրագրերի առաջնահերթ ուղղությունների հիման վրա:

Սոցիալ-մշակութային ոլորտներում կարևորվում են սոցիալական ապահովության բնագավառում ուշադրությունը անապահով ընտանիքներին, արցախահայության, թոշակառուների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանվածության և հաշմանդամների լուծում պահանջող խնդիրները:

Կարևորվում է՝

- համայնքային ենթակայության մշակույթի և սպորտի բնագավառների՝ մշակույթի տների, գրադարանների, երաժշտական դպրոցների աշխատողների աշխատավարձերի բարձրացումը, շարունակվում են համայնքային ենթակայության հուշարձանների վերականգնման և պահպանման աշխատանքները,
- ճանապարհային տնտեսության, առևտրի և տնտեսական զարգացման, քաղաքաշինության, անշարժ գույքի կադաստրի, գյուղատնտեսության և ջրային տնտեսության, էներգետիկայի և բնապահպանության ոլորտներում տարվող աշխատանքները,
- բազմաբնակարան շենքերի սպասարկման, վթարային շենքերի գույքագրմանն ու ամրացմանն ուղղված ծրագրերի մշակման, նոր շենքերի կառուցման, ապօրինի շինությունների քանդմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

ՄԺԾԾ-ի հիմնական նպատակն է ներկայացնել համայնքի ծախսային ռազմավարությունը հաջորդ երեք տարվա բյուջեի ծախսային ծրագրերի ֆինանսական գնահատականը: Համայնքի ՄԺԾԾ-ն բաղկացած է երկու մասից՝

1.համայնքի եկամուտները շարադրող մաս,
2.համայնքի՝ հնգամյա զարգացման ծրագրից բխող ծախսային քաղաքականությունը շարադրող մաս:

ՄԺԾԾ-ն իրենից ենթադրում է գործընթացային ծրագիր, որն էլ ըստ էության իրենից ներկայացնում է քաղաքականությունների ձևակերպում-պլանավորում-բյուջետավարում տեսքով շղթա՝ դառնալով համայնքի բյուջեի կազմման ուղեցույց:

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2024 թվականին իրականացվում են 2022-2023 թթ սուբվենցիոն ծրագրերի շարունակական հետևյալ աշխատանքները.

Կոտայքի մարզի Հրազդան համայնքի թիվ 11, թիվ 6, թիվ 8 մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման և թիվ 4 մանկապարտեզի 2-րդ մասնաշենքի, միջանցքի հիմնանորոգման ու վերանորոգման աշխատանքների իրականացում,Լեռնանիստ բնակավայրում ջրագծի կառուցման աշխատանքներ, մոդուլային մանկապարտեզի կառուցման աշխատանքներ, Հրազդան համայնքի Հրազդան քաղաքի Կենտրոն և Մաքրավան, Միկրոշրջան և Հարավային թաղամասերի միջթաղամասային ճանապարհների հիմնանորոգման և Զ.Անդրանիկի պողոտայի բետոնե բաժանարարների կառուցման և տեղադրման աշխատանքներ, Հրազդան համայնքի տարածքում մայթերի նոր եզրաքարերի կառուցման աշխատանքներ:

Նախատեսվող աշխատանքների արդյունքում կունենանք բոլորովին նոր, հարմարավետ ու էներգաարդյունավետ հաստատություններ՝ բոլոր չափանիշներին համապատասխան: Ծրագրերի իրականացման արդյունքում կփոխվի համայնքի երեխաների ուսման որակը, համայնքում կավելանա վերանորոգված ու հարմարավետ նախադպրոցական հաստատությունների թիվը և մանկապարտեզ հաճախող սաների թվի զգալի աճ կունենանք,ինչպես նաև կունենանք բարեկարգ ներհամայնքային ճանապարհներ:

Վերանորոգվում են նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների խոհանոցները:

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2024 թվականին նախատեսված է իրականացնել հետևյալ ծրագրերը.

Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի թիվ 15 մակապարտեզի տանիքի վերանորոգման, նոր դռների և պատուհանների տեղադրման աշխատանքներ:

<u>Հրազդան համայնքի 2025 թվականի բյուջեն կանխատեսվում է՝</u>

Եկամուտների գծով՝ 3 527 233 000 ՀՀ դրամ,

Ծախսերի գծով՝ 3 527 233 000 ՀՀ դրամ

Եկամուտների կանխատեսում.

Բյուջեի ընդամենը եկամուտներ տողում վարչական բյուջեի մասով ընդամենը նախատեսվել է 2 912 233 000 դրամ, որի մեջ մտնում են Հրազդան, Քաղսի, Սոլակ, Լեռնանիստ և Ջրառատ բնակավայրերի եկամուտների պլանները: Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտներ տողում պլանավորված 1 260 000 000 ՀՀ դրամ պլանային թվի մեջ մտած է պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) պլանը 615 000 0000 ՀՀ դրամի չափով և 645 000 000 ՀՀ դրամի չափով ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի պլանային կանխատեսումը:

Եկամուտների պլանի մեջ սեփական եկամուտները կազմում են 1 733 684 830 ՀՀ դրամ, որը նախորդ տարվա եկամուտներից պակաս է պլանավորվել 241 451 091 ՀՀ դրամով: Պակաս է պլանավորվել համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտները, ՔԿԱԳ-ից պետական տուրքը,այլ հիմնական միջոցների իրացումից տուրքը:

Հարկեր և տուրքեր եկամուտների 2025 թվականի պլանը կազմում է 614 549 600 ՀՀ դրամ գումար, որի մեջ մտնում են հինգ բնակավայրերի հարկերի և տուրքերի պլանային թվերը: Ըստ բնակավայրերի պլանային թվերը կազմվել են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 189-Ն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված դրույքաչափերը:

Պաշտոնական դրամաշնորհներ եկամուտների գծով կանխատեսվող պլանային թիվը կազմում է 2 434 550 200 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի պլանային թիվը՝ 1 812 795 800 ՀՀ դրամ, պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների պլանային թիվը՝ 615 000 000 ՀՀ դրամի չափով և պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների պլանային թիվը՝ 6 754 400 ՀՀ դրամի չափով:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը կանխատեսվում է 18 785 000 << դրամի չափով, որից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար կանխատեսվել է 6 785 000 << դրամի չափով, նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար եկամուտի պլանը կանխատեսվել է 12 000 000 դրամի չափով:

Համայնքի բյուջե մուտքագրվող տեղական տուրքերի պլանը կանխատեսվել է 47 138 000 << դրամի չափով, որից համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար կանխատեսվել է 585 000 000 << դրամի չափով, քանդման թույլտվության համար 160 000 << դրամի չափով, համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար կանխատեսվել է 15 468 000 << դրամի չափով: Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության տուրքը կանխատեսվել է 4 400 000 << դրամ: Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, խաղատները ժամը 24:00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տուրքը կանխատեսվել է 1 200 000 << դրամի չափով: Գովազդի թույլտվության տուրքը պլանավորվել է 11 960 000 << դրամի չափով:

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ եկամուտի տողում կանխատեսվել է 3 998 000 << դրամ՝ << արդարադատության նախարարության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Այլ եկամուտներ տողում հենասյունների վարձակալության վճարի հավաքագրման պլանը նախատեսվել է 10 000 000 << դրամի չափով, համայնքի սեփականություն համարվող հողամասերի սեփականության իրավունքի վկայագրերի պետական գրանցման վճարը 5 000 000 << դրամի չափով, համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ տողի պլանային թիվը կազմում է 82 000 000 << դրամ:Գույքի վարձակալությունից եկամտի պլանը կանխատեսվել է 40 789 700 << դրամի չափով, որն իր մեջ ներառում է համայնքի սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների և այլ գույքի վարձակալությունից մուտքերի պլանային թիվը: Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամտի պլանը՝ 189 895 500 << դրամի չափով, որն իր մեջ ներառում է Հրազդան համայնքի բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարների պլանները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարները կանխատեսվել է ամսական մեկ երեխայի հաշվարկով 6 000 << դրամ:

Տեղական վճարներ տողի եկամտի պլանը՝ 144 450 000 << դրամի չափով, որն իր մեջ ներառում է աճուրդների մասնակցության պլանը՝ 3 450 000 << դրամի չափով,աղբահանության վճարը՝ 97 000 000 << դրամի չափով, ինքնակամ կառուցված շենքերի - շինությունների օրինականացման վճարների եկամուտների պլանները՝ 40 000 000 << դրամի չափով, շինարարության ավարտը փաստագրելու համար վճարը՝ 4 000 000 << դրամի չափով, մուտքեր տույժերից, տուգանքներից տողի եկամտի պլանը՝ 2 000 000 << դրամի չափով:

2. Ծախսերի կանխատեսում.

Ծախսային մասում պլանավորվել է 3 527 233 000 << դրամի ծախս, որից վարչական բյուջեի մասով՝ 2 912 233 000 << դրամի չափով, ֆոնդային բյուջեի մասով՝ 1 260 000 000 << դրամի չափով: 1.1.1.51 գործառնական դասակարգմամբ բացված օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական

կառավարում ծրագրով նախատեսվել է 502 072 500 ՀՀ դրամի ծախս, որից 483 572 500 ՀՀ դրամի ծախս է պլանավորվել վարչական բյուջեի տնտեսագիտական հոդվածներով, 18 500 000 ՀՀ դրամի ծախս՝ ֆոնդային բյուջեի հոդվածներով:

Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով պլան նախատեսվել է 374 266 000 ՀՀ դրամի չափով: Այդ տողը ներառում է Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների և Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների աշխատավարձերի պլանները, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 191 «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումը, ինչպես նաև Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 197 որոշումը: Նախատեսվել են պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների համար 30 000 000 ՀՀ դրամի չափով, իսկ «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների համար 2 600 000 ՀՀ դրամի չափով:

Էներգետիկ ծառայություններ հոդվածի պլանը կազմում է 35 000 000 ՀՀ դրամ, որը ներառում է Հրազդան համայնքի վարչական շենքի, բնակավայրերի վարչական շենքերի էներգետիկ ծառայությունների՝ գազի, էլեկտրաէներգիայի գծով ծախսերը, կոմունալ ծառայությունների ծախսը 2 200 000 ՀՀ դրամով իր մեջ ներառում է ջրմուղ-կոյուղու գծով ծախսերը:

Կապի ծառայությունների գծով Հրազդան համայնքի և «ԷՍԷԼԿԱ ՔԸՆԵՔՇԸՆ» ՍՊԸ-ի հետ, «Տելեկոմ» ՓԲԸ-ի և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի չափով նախատեսվել են պլաններ, որոնց հանրագումարը կազմում է 2 070 500 ՀՀ դրամ:

Նախատեսվել են ապահովագրական ծախսեր 980 000 ՀՀ դրամի չափով, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով, գործուղման, աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման զարգացման ծառայությունների գծով ծախսեր: Տեղեկատվական ծառայությունների գծով նախատեսվել են ծախսեր ըստ՝ «Պաշտոնական տեղեկագիր» ՍՊԸ-ի և «Գործք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի վճարումներ կատարելու համար: Նախատեսվել են կառավարչական ծառայությունների գծով ծախսեր , մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր և ներկայացուցչական ծախսեր:

Շենքերի և շինությունների կառուցում 5112 տնտեսագիտական հոդվածով նախատեսվել է պլան 5 000 000 ՀՀ դրամ, որը էներգախնայողության հիմնադրամի հետ կնքված Հրազդանի վարչական շենքի ջեռուցման համակարգի ներդրման ծախսն է:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 հոդվածով նախատեսվել է 10 000 000 ՀՀ դրամի ծախս,որով իրականացվելու է վարչական շենքի պատերի ամրացման և բակի բարեկարգման աշխատանքներ:

5122 հոդվածով նախատեսվել է 3 000 000 դրամ համակարգչային սարքավորումների ձեռք բերման նպատակով:

5129 հոդվածով նախատեսվել է 500 000 ՀՀ դրամի ծախս այլ մեքենաների և սարքավորումների ձեռք բերման նպատակով:

1.3.3 ծրագրով 4231 հոդվածով նախատեսել ենք 3 000 000 ՀՀ դրամի չափով փաստաթղթերի արխիվացման ծախսեր, 4232 հոդվածով 5 500 000 ՀՀ դրամի ծախսեր՝ «Վի ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ՏՀՋՎԿ» հասարակական կազմակերպության հետ կնքված պայմանագրերով իրականացնելու ծրագրային սպասարկումներ:

4216 հոդվածով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի չափով այլ մեքենաների վարձակալություն, 4239 հոդվածով նախատեսել ենք 2 000 000 ՀՀ դրամի չափով ընդհանուր բնույթի այլ ծառայություններ:

1.6.1.51 ծրագրով նախատեսել ենք ծախսեր 82 734 800 ՀՀ դրամի չափով, որից 4241 հոդվածով 8 000 000 ՀՀ դրամ Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի, շենքերի և շինությունների չափագրման և սահմանված կարգով հատակագծերի կազմման ծառայությունների մատուցման համար, 4511 հոդվածով 57 734 800 ՀՀ դրամ Հրազդանի համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախահաշվով պահպանման ծախսեր, իսկ 4823 հոդվածով՝ 10 000 000 ՀՀ դրամ միասնական տեղեկանքների տրամադրման

աշխատանքների համար, իրավունքի պետական գրանցման կամ դադարեցման աշխատանքների համար, այլ տեղեկատվության տրամադրման աշխատանքների համար, պատճենների տրամադրման, դատարան ներկայացվող հայցադիմումների պետական տուրքի վճարման համար, 4239 հոդվածով՝ 500 000 << դրամ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ձեռք բերման համար:

2.2.1 Քաղաքացիական պաշտպանության գծով՝ 4 500 000 << դրամի չափով,

2.5.1 Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) ծրագրով՝ 1 000 000 << դրամի չափով ծախս:

3 .2. 1 Փրկարար ծառայության ծրագրով նախատեսված են ծախսեր՝ 1 500 000 << դրամի չափով ՝անհետաձգելի, արտակարգ իրավիճակների, տարերային աղետների ժամանակ բնակչության համար անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար:

4.2.1 Գյուղատնտեսության ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է 2 000 000 << դրամ գյուղերի դաշտային ճանապարհների բարեկարգման նպատակով:

4.2.4 Ոռոգում ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է 2 000 000 << դրամ ոռոգման ցանցի խողովակների վերանորոգման նպատակով:

4.5.1.51 Ճանապարհային տրանսպորտ ծրագրով պլանավորվել է 606 700 000 << դրամի ծախս, որից 4251 հոդվածով 40 000 000 << դրամի չափով՝ փոսալցման և գծանշման աշխատանքների համար, 4239 հոդվածով պլանավորվել է 2 000 000 << դրամ տեղափոխման և այլ ընթացիկ ծառայությունների համար, 4241 հոդվածով նախատեսվել է 2 000 000 << դրամ խորհրդատվական ծառայությունների ձեռք բերման համար, 4269 հոդվածով 1 500 000 << դրամ նախատեսվել է ճանապարհային նշանների ձեռք բերման համար, 5122 հոդվածով՝ 4 000 000 << դրամի ծախս է պլանավորվել լուսացույցերի և տեսախցիկների ձեռք բերման նպատակով, 5134 հոդվածով պլանավորվել է 10 000 000 << դրամ նախագծանախահաշվային աշխատանքների ձեռք բերման նպատակով, 5113 հոդվածով պլանավորվել է 547 200 000 << դրամ գումար՝ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների համար:

5.1.1.51 Աղբահանության ծրագրով պլանավորվել է 434 482 500 << դրամ գումարով ծախս, որից 4111 հոդվածով 180 000 000 << դրամ ծախսը՝ «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի պահպանման նախահաշվով որպես աշխատավարձ, 80 724 000 << դրամով պլանավորվել է «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով աշխատավարձի գծով ծախս: «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի աշխատողների վարձատրությունը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 195 որոշմամբ: Պարգևատրման հոդվածով «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի համար նախատեսվել է 15 000 000 << դրամի ծախս, իսկ «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով՝ 7 500 000 << դրամի ծախս: Աղբահանության ծրագրով նախատեսվել են նաև կապի ծառայության վճար, աշխատողների ապահովագրության վճարներ, մեքենաների վարձակալության գումարներ, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր, գրասենյակային նյութերի, հագուստի, հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման ծախսեր, բնապահպանական վճարների գծով ծախսեր: «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի 4264 հոդվածով պլանավորվել է 90 000 000 << դրամ տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով: Նախատեսվել են նաև տրանսպորտային սարքավորումների, վարչական սարքավորումների, այլ մեքենաների և սարքավորումների, ինչպես նաև շենքերի և շինությունների ձեռքբերման ծախսեր:

6.3.1 Ջրամատակարարման ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է ծախս 900 000 << դրամի չափով ջրամատակարարման խողովակների ընթացիկ նորոգման նպատակով, իսկ 5129 հոդվածով՝ 1 000 000 << դրամի ծախս:

6.4.1.51 Փողոցների լուսավորում ծրագրով նախատեսվել է 4212 հոդվածով 60 000 000 << դրամի ծախս, որում ներառված են համայնքի մեջ մտնող բնակավայրերի արտաքին լուսավորության ծախսը: Այս ծրագրում ներառել ենք «Հրազդանքաղլույս» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսը՝ 89 696 400 << դրամի չափով:

6.6.1 Ծրագրով պլանավորվել է 19 500 000 << դրամ գումարի ծախս, որն ուղղվելու է բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար իզոգամի և թիթեղի ձեռքբերմանը, ինչպես նաև ընդհանուր բնույթի այլ ծառայությունների և մասնագիտական ծառայությունների ձեռքբերմանը:

7.6.2 Առողջապահության ծրագրով նախատեսել ենք 500 000 << դրամի ծախս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին առողջության պահպանման, բուժօգնության նպատակով:

8.1.1 Հանգստի, սպորտի ծառայություններ ծրագրով կրթական, մշակութային և սպորտային նպաստների գծով 4727 հոդվածով՝ 1 500 000 ՀՀ դրամի չափով:
8.2.3 Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրով պլանավորել ենք 119 920 000 ՀՀ դրամ գումար, որից 89 139 000 ՀՀ դրամի ծախս «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար, 30 781 000 ՀՀ դրամի չափով՝ «Հրազդանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:
8.4.2 Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ ծրագրով 4639 հոդվածով նախատեսվել է 300 000 ՀՀ դրամ, 4819 հոդվածով 2 000 000 ՀՀ դրամ պլանավորված գումարից նախատեսվել են «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը և «Հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային խնամքի և զարգացման կենտրոն» երեխաների աջակցության հիմնադրամին նվիրատվություններ, 4621 հոդվածով նախատեսվել է 480 000 ՀՀ դրամ «Հայկական Կարմիր խաչ ընկերությանը» ընթացիկ դրամաշնորհ տրամադրելու նպատակով:
9.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրով պլանավորվել է 1 346 293 200 ՀՀ դրամի ծախս, որից սուբսիդիա 997 133 200 ՀՀ դրամի չափով, 4655 հոդվածով 97 660 000 ՀՀ դրամի չափով, որից 2 660 000 ՀՀ դրամի չափով նախատեսվել է տրամադրել Էներգախնայողության հիմնադրամին՝ ջեռուցման համակարգերի ներդրման ֆինանսավորման համար, 25 000 000 ՀՀ դրամի չափով՝ թիվ 5 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար, 20 000 000 դրամի չափով՝ թիվ 12 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար և 20 000 000 դրամի չափով՝ թիվ 13 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար, 30 000 000 ՀՀ դրամ՝ թիվ 16 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար, 4657 այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածով նախատեսվել է 1 500 000 ՀՀ դրամի չափով ծախս, որը նախատեսվել է թիվ 12, թիվ 13 և թիվ 16 ՀՈԱԿ-ների բակերի խաղահրապարակների և կարուսելների տեղադրման համար՝ յուրաքանչյուրին 500 000-ական ՀՀ դրամի չափով: 5113 հոդվածով նախատեսվել է 250 000 000 ՀՀ դրամի ծախս Հրազդան համայնքի թիվ 2 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի հիմնանորոգման համար: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 21-ի N 222 որոշումը, որի համաձայն ամսական աշխատավարձը կազմում է 45 002 300 ՀՀ դրամ, տարեկան աշխատավարձը կազմում է 540 027 600 ՀՀ դրամ: Կապի ծառայության տարեկան գումարը կազմում է 924 000 ՀՀ դրամ /թվով 13 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների համար ամսական կազմում է 5000 ՀՀ դրամ, , թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի համար՝ 7 000 ՀՀ դրամ: Էներգետիկ ծառայություններ՝ 4212 հոդվածով նախատեսվել է 71 350 000 ՀՀ դրամի ծախս, որից ջեռուցման ծախսը կազմում է 45 500 000 ՀՀ դրամ, իսկ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը կազմում է 25 850 000 ՀՀ դրամ, /1 երեխայի համար տարեկան կազմում է 10 000 ՀՀ դրամ/: Նախադպրոցական ուսումնական հաստատության 1 երեխայի համար նախատեսվել է օրական 30 լիտր ջուր /2585 երեխայի համար տարեկան կազմում է 8 911 800 ՀՀ դրամ/: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով 1 երեխայի համար նախատեսվել է 2000 ՀՀ դրամ ծախս /2585 երեխայի համար տարեկան կազմում է 5 170 000 ՀՀ դրամ/: Գրասենյակային նյութերի ձեռք բերման համար 1 խմբի հաշվով տարեկան նախատեսվել է 20 000 ՀՀ դրամ /93 խմբի համար տարեկան կազմում է 1 860 000 ՀՀ դրամ:
Մասնագիտական ծառայությունների ձեռք բերման համար 4241 հոդվածով նախատեսվել է 2 531 400 ՀՀ դրամ, որից դեռատիզացիայի համար ծախս նախատեսվել է տարեկան 900 000 ՀՀ դրամի չափով, բուժզննման համար՝ տարեկան 877 000 ՀՀ դրամի ծախս, գազի սպասարկման ծառայության համար՝ 754 400 ՀՀ դրամի չափով: Կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 4267 հոդվածով նախատեսվել է 264 968 000 ՀՀ դրամի ծախս, որից 1 երեխայի համար հաշվարկվել է օրական 400 ՀՀ դրամ սննդամթերքի ծախս, որը 2585 երեխայի համար տարվա կտրվածքով կազմում է 260 568 000 ՀՀ դրամ, իսկ կենցաղային նյութեր ձեռք բերելու համար նախատեսվել է 4 400 000 ՀՀ դրամի ծախս, որից 3 720 000 ՀՀ դրամը նախատեսված է տնտեսական նյութեր ձեռք բերելու համար, թիվ 11 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի սպասքի ձեռքբերման համար նախատեսվել է 680 000 ՀՀ դրամ /1 խմբի հաշվով նախատեսվել է տարեկան 40 000 ՀՀ դրամ/: Հատուկ նպատակային այլ նյութեր ձեռք բերելու համար 1 երեխայի հաշվով նախատեսվել է տարեկան 2000 ՀՀ դրամ /2585 երեխայի համար տարեկան կազմում է 5 170 000 ՀՀ դրամ/: Համակարգչային ծառայություններ՝ 4232 հոդվածով նախատեսվել է 282 000 ՀՀ դրամի ծախս, որից Լեռնանիստի ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի ՀԾ հաշվապահական ծրագրի համար՝ 107 000 ՀՀ դրամ: Առողջապահական և լաբորատոր նյութեր՝ 4266 հոդվածով նախատեսվել է 385 000 ՀՀ դրամի չափով ծախս, պարտադիր վճարներ՝ 4823 հոդվածով

նախատեսվել է 957 000 ՀՀ դրամի չափով ծախս, որից 870 000 ՀՀ դրամ նախասվում է աղբահանության վճար, 87 000 ՀՀ դրամը՝ պարտադիր վճար, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4252 հոդվածով նախատեսվել է 448 000 ՀՀ դրամի ծախս, 1 040 000 ՀՀ դրամ նախատեսվում է 4231 հոդվածով՝ փաստաթղթերի արխիվացման համար, նախատեսվում է նաև 385 000 ՀՀ դրամ 4234 հոդվածով ՝տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Նախատեսվել են նաև նախորդ տարիների պարտքային պարտավորությունների գծով ծախսեր՝ 4269 հոդվածով՝ 922 000 ՀՀ դրամ ՎԻՊ ՖՈՒԴ ՍՊԸ-ին: 91 801 412 ՀՀ դրամ նախատեսվում է մոդուլային մանկապարտեզի աշխատակազմի տարեկան աշխատավարձի և պահպանման ծախսերի համար:

9.5.1Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 200 որոշումը, որի համաձայն տարեկան աշխատավարձը կազմում է ՀՈԱԿ-ների համար՝ 183 904 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 84 924 000 ՀՀ դրամ: Էլեկտրաէներգիայի և ջեռուցման տարեկան ծախսը կազմել է ՀՈԱԿ-ների համար 10 780 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 9 000 000 ՀՀ դրամ, ջրամատակարարման տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 403 100 ՀՀ դրամ, իսկ բյուջետային հիմնարկների համար՝ 600 000 ՀՀ դրամ: Կապի ծառայության տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 270 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 244 800 ՀՀ դրամ: Ներքին գործուղումները բյուջետային հիմնարկների համար կազմում է 450 000 ՀՀ դրամ, ՀՈԱԿ-ների համար՝ 100 000 ՀՀ դրամ: Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվող յուրաքանչյուր երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց գանձվող տեղական վճարի չափը սահմանվել է Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 199-Ն որոշման համաձայն:

10.2.1 Ծերություն ծրագրով նախատեսել ենք 1 300 000 դրամի ծախս, որից 4216 հոդվածով 1 000 000 ՀՀ դրամ՝ ծերերի ժամանցի վայրերի վարձակալության գումար՝ Ռոզա Շահբազյանի հետ կնքված պայմանագրի շրջանակներում վճարում կատարելու նպատակով, 4269 հոդվածով 300 000 ՀՀ դրամ հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման համար:

10.7.1 Սոցիալական հատուկ արտոնություններ ծրագրով նախատեսել ենք 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով 5 000 000 ՀՀ դրամի այլ նպաստներ բնակչությանը:

11.1.2 Հրազդան համայնքի բյուջեի վարչական մասում պահուստային ֆոնդ ծրագրով նախատեսել ենք 129 350 300 ՀՀ
դրամի պահուստային միջոցներ:

2025 թվականին սուբվենցիոն ծրագրերով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները:

1. **Հրազդան համայնքի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:**
2. **Հրազդան համայնքի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:**
3. **Հրազդան համայնքի ներհամայնքային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների իրականացում:**
4. **Հրազդան համայնքի Հարավային թաղամասի թիվ 2 մանկապարտեզի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:**
5. **Հրազդան համայնքի Կոստան Զարյանի անվան արվեստի դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում:**
6. **Հրազդան համայնքի Զ. Անդրանիկի պողոտայի շրջանաձև խաչմերուկից մինչև պուրակային փողոց տանող ճանապարհի և 3-րդ փողոցի հողածածկ հատվածում ծառերի տնկման աշխատանքների իրականացում - 3 076 910 ՀՀ դրամ բնապահպանական մասհանումներ, 400 000 ՀՀ դրամ համայնքի ներդրում:**

<u>Հրազդան համայնքի 2026 թվականի բյուջեն կանխատեսվում</u> է՝

Եկամուտների գծով՝ 3 133 225 800 ՀՀ դրամ,
Ծախսերի գծով՝ 3 133 225 800 ՀՀ դրամ:

Եկամուտների կանխատեսում.

Բյուջեի ընդամենը եկամուտներ տողում վարչական բյուջեի մասով ընդամենը նախատեսվել է 2 902 325 800 ՀՀ դրամ գումարով պլան, որի մեջ մտնում են Հրազդան, Քաղսի, Սոլակ, Լեռնանիստ և Ջրառատ բնակավայրերի եկամուտների պլանները: Ֆոնդային բյուջեի ընդամենը եկամուտներ տողում պլանավորված 835 700 000 ՀՀ դրամ պլանային թվի մեջ մտած է պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների (սուբվենցիաներ) պլանը 230 900 000 ՀՀ դրամի չափով և 604 800 000 ՀՀ դրամի չափով՝ ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի պլանային կանխատեսումը:

Եկամուտների պլանի մեջ սեփական եկամուտները կազմում են 1 683 577 590 ՀՀ դրամ,որը 2025 թվականի կանխատեսվող եկամուտներից նվազ է պլանավորվել 50 107 240 ՀՀ դրամով: 2026 թվականին նոտարական գրասենյակներից պետական տուրքի պլանը պակաս է կանխատեսվել է 7 000 000 ՀՀ դրամով, ինքնակամ կառուցվող շենք-շինությունների օրինականացման համար տեղական վճարի պլանը պակաս է պլանավորվել 13 000 000 ՀՀ դրամով, հողի իրացումից մուտքերը պակաս է պլանավորվել 40 000 000 ՀՀ դրամով:

Հարկեր և տուրքեր եկամուտների 2026 թվականի պլանը կազմում է 692 089 100 ՀՀ դրամ գումար, որի մեջ մտնում են հինգ բնակավայրերի հարկերի և տուրքերի պլանային թվերը:

Ըստ բնակավայրերի պլանային թվերը կազմվել են հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 189-Ն «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան համայնքի տեղական տուրքերի և վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված դրույքաչափերը:

Պաշտոնական դրամաշնորհներ եկամուտների գծով կանխատեսվող պլանային թիվը կազմում է 2 050 450 200 ՀՀ դրամ, որը իր մեջ ներառում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիայի պլանային թիվը՝ 1 812 795 800 ՀՀ դրամ, կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումների՝ սուբվենցիաների պլանային թիվը՝ 230 900 000 ՀՀ դրամի չափով, ընթացիկ սուբվենցիաներ տողում՝ 6 754 400 ՀՀ դրամ :

Այլ եկամուտներ տողում հենասյունների վարձակալության վճարի պլանը կանխատեսվել է 10 000 000 ՀՀ դրամի չափով, համայնքի սեփականություն համարվող հողամասերի սեփականության իրավունքի վկայագրերի պետական գրանցման վճարը 7 000 000 ՀՀ դրամի չափով, գույքի վարձակալությունից եկամտի պլանը՝ 40 723 000 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է համայնքի սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների և այլ գույքի վարձակալությունից մուտքերի պլանային թիվը: Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամտի պլանը՝ 191 065 500 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է Հրազդան համայնքի բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններ և արտադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների ծնողական վճարների պլանները, պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցները:

Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը կանխատեսվում է 11 455 000 ՀՀ դրամի չափով, որից քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար կանխատեսվել է 6 455 000 ՀՀ դրամի չափով, նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար եկամուտի պլանը կանխատեսվել է 5 000 000 ՀՀ դրամի չափով:

Համայնքի բյուջե մուտքագրվող տեղական տուրքերի պլանը կանխատեսվել է 49 153 000 ՀՀ դրամի չափով, որից համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների շինարարության թույլտվության համար կանխատեսվել է 6 000 000 ՀՀ դրամի չափով, քանդման թույլտվության համար՝ 160 000 ՀՀ դրամի չափով: Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար կանխատեսվել է 15 468 000 ՀՀ դրամի չափով: Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության տուրքը կանխատեսվել է 4 400 000 ՀՀ դրամ: Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, խաղատները ժամը 24:00 –ից հետո աշխատելու թույլտվության համար տուրքը կանխատեսվել է 1 200 000 ՀՀ դրամի չափով: Գովազդի թույլտվության տուրքը պլանավորվել է 11 960 000 ՀՀ դրամի չափով:

Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ եկամուտի տողում կանխատեսվել է 3 998 000 ՀՀ դրամ՝ ՀՀ արդարադատության նախարարության հետ կնքված պայմանագրի հիման վրա:

Տեղական վճարներ տողի եկամտի պլանը՝ 135 900 000 ՀՀ դրամի չափով, որն իր մեջ ներառում է աճուրդների մասնակցության պլանը՝ 5 900 000 ՀՀ դրամի չափով,աղբահանության վճարը՝ 97 000 000 ՀՀ դրամի չափով, ինքնակամ կառուցված շենքերի-շինությունների օրինականացման վճարների եկամուտների պլանները՝ 27 000 000 ՀՀ դրամի չափով, շինարարության ավարտը փաստագրելու համար վճարը՝ 6 000 000 ՀՀ դրամի չափով, մուտքեր տույժերից, տուգանքներից տողի եկամտի պլանը՝ 2 000 000 ՀՀ դրամի չափով:

2. Ծախսերի կանխատեսում.

Ծախսային մասում պլանավորվել է 3 133 225 800 ՀՀ դրամի ծախս, որից վարչական բյուջեի մասով՝ 2 902 325 800 ՀՀ դրամի չափով, ֆոնդային բյուջեի մասով 835 700 000 ՀՀ դրամի չափով:

1.1.1.51 գործառնական դասակարգմամբ բացված օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում ծրագրով նախատեսվել է 547 692 500 ՀՀ դրամի ծախս,որից 534 192 500 ՀՀ դրամի ծախս է պլանավորվել վարչական բյուջեի տնտեսագիտական հոդվածներով, 13 500 000 ՀՀ դրամի ծախս՝ ֆոնդային բյուջեի հոդվածներով:

Աշխատողների աշխատավարձերի և հավելավճարների գծով պլան նախատեսվել է 374 266 000 ՀՀ դրամի չափով: Այդ տողը ներառում է Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների և Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների աշխատավարձերի պլանները, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 191 «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» որոշումը, ինչպես նաև Հրազդանի համայնքապետարանի «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 197 որոշումը: Նախատեսվել են պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ Հրազդան համայնքի աշխատակազմի աշխատողների համար 82 600 000 ՀՀ դրամի չափով, իսկ «Վարչական շենքի սպասարկման և պահպանման հիմնարկի» աշխատողների համար 3 300 000 ՀՀ դրամի չափով:

Էներգետիկ ծառայություններ հոդվածի պլանը կազմում է 35 000 000 ՀՀ դրամ, որը ներառում է Հրազդան համայնքի վարչական շենքի, բնակավայրերի վարչական շենքերի էներգետիկ ծառայությունների՝ գազի, էլեկտրաէներգիայի գծով ծախսերը, կոմունալ ծառայությունների ծախսը 2 200 000 ՀՀ դրամով իր մեջ ներառում է ջրմուղ-կոյուղու գծով ծախսերը:

Կապի ծառայությունների գծով Հրազդան համայնքի և «ԷՍԷԼԿԱ ՔԸՆԵՔՇԸՆ» ՍՊԸ-ի հետ, «Տելեկոմ» ՓԲԸ-ի և «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագրերի մասով նախատեսվել են պլաններ, որոնց հանրագումարը կազմում է 2 070 500 ՀՀ դրամ:

Նախատեսվել են ապահովագրական ծախսեր 980 000 ՀՀ դրամի չափով, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսեր՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով, գործուղման, աշխատակազմի մասնագիտական վերապատրաստման զարգացման ծառայությունների գծով

ծախսեր: Տեղեկատվական ծառայությունների գծով նախատեսվել են ծախսեր «Պաշտոնական տեղեկագիր» ՍՊԸ-ի և «Գործք» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրերի վճարումներ կատարելու համար:Նախատեսվել են կառավարչական ծառայությունների գծով ծախսեր, մասնագիտական ծառայությունների գծով ծախսեր և ներկայացուցչական ծախսեր:

Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում 5113 հոդվածով նախատեսվել է 15 000 000 ՀՀ դրամի ծախս:

5122 հոդվածով նախատեսվել է 3 000 000 ՀՀ դրամ համակարգչային սարքավորումների ձեռքբերման նպատակով:

5129 հոդվածով նախատեսվել է 500 000 ՀՀ դրամի ծախս այլ մեքենաների և սարքավորումների ձեռքբերման նպատակով:

1.3.3 ծրագրով 4231 հոդվածով նախատեսել ենք 3 000 000 ՀՀ դրամի չափով փաստաթղթերի արխիվացման ծախսեր, 4232 հոդվածով 5 200 000 ՀՀ դրամի ծախսեր՝ «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ՏՀԶՎԿ» հասարակական կազմակերպության հետ պայմանագրերով՝ իրականացնելու ծրագրային սպասարկումներ:

4216 հոդվածով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի չափով այլ մեքենաների վարձակալություն, 4239 հոդվածով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի չափով ընդհանուր բնույթի այլ ծառայություններ:

1.6.1.51 ծրագրով նախատեսել ենք ծախսեր 92 888 400 ՀՀ դրամի չափով, որից 4241 հոդվածով 8 000 000 ՀՀ դրամ Հրազդան համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի, շենքերի և շինությունների չափագրման և սահմանված կարգով հատակագծերի կազմման ծառայությունների մատուցման համար, 4237 հոդվածով 2 000 000 ՀՀ դրամի չափով ներկայացուցչական ծախսեր, 4239 հոդվածով 2 000 000 ՀՀ դրամի չափով ընդհանուր բնույթի այլ ծախսեր 4511 հոդվածով 57 888 400 ՀՀ դրամ Հրազդանի համայնքապետարանի «Հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների, հուշարձանների պահպանման և շահագործման» համայնքային ոչ առևտրային կազմակերպության նախահաշվով պահպանման ծախսեր, իսկ 4823 հոդվածով՝ 10 000 000 ՀՀ դրամ միասնական տեղեկանքների տրամադրման աշխատանքների համար, իրավունքի պետական գրանցման կամ դադարեցման աշխատանքների համար, այլ տեղեկատվության տրամադրման աշխատանքների համար, պատճենների տրամադրման, դատարան ներկայացվող հայցադիմումների պետական տուրքի վճարման համար:

2.2.1 Քաղաքացիական պաշտպանության գծով՝ 4 500 000 ՀՀ դրամի չափով,

3.2.1 Փրկարար ծառայության ծրագրով նախատեսված են ծախսեր՝ 1 500 000 ՀՀ դրամի չափով՝ անհետաձգելի, արտակարգ իրավիճակների, տարերային աղետների ժամանակ բնակչության համար անհրաժեշտ օգնություն ցուցաբերելու համար,

2.5.1 Պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) ծրագրով՝ 1 000 000 ՀՀ դրամի չափով ծախս:

4.2.1 Գյուղատնտեսության ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է 6 000 000 ՀՀ դրամ գյուղերի դաշտային ճանապարհների բարեկարգման նպատակով:

4.2.4 Ոռոգում ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է 22 000 000 ՀՀ դրամ ոռոգման ցանցի խողովակների վերանորոգման նպատակով:

4.5.1.51 Ճանապարհային տրանսպորտ ծրագրով պլանավորվել է 559 500 000 ՀՀ դրամի ծախս, որից 4251 հոդվածով 40 000 000 ՀՀ դրամի չափով՝ փոսալցման և գծանշման աշխատանքների համար, 4239 հոդվածով պլանավորվել է 2 000 000 ՀՀ դրամ տեղափոխման և այլ ընթացիկ ծառայությունների համար, 4241 հոդվածով նախատեսվել է 2 000 000 ՀՀ դրամ՝ խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար, 4269 հոդվածով 1 500 000 ՀՀ դրամ նախատեսվել է ճանապարհային նշանների ձեռքբերման համար, 5122 հոդվածով՝ 4 000 000 ՀՀ դրամի ծախս է պլանավորվել լուսացույցերի և տեսախցիկների ձեռք բերման նպատակով, 5134 հոդվածով պլանավորվել է 10 000 000 ՀՀ դրամ նախագծանախահաշվային աշխատանքների ձեռքբերման նպատակով, 5113 հոդվածով պլանավորվել է 500 000 000 ՀՀ դրամ գումար ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների համար,նաև սուբվենցիոն ծրագրերով:

5.1.1.51 Աղբահանության ծրագրով պլանավորվել է 439 482 500 ՀՀ դրամ ծախս, որից 4111 հոդվածով 185 000 000 ՀՀ դրամ ծախսը՝ «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի պահպանման նախահաշվով՝ որպես աշխատավարձ, 80 724 000 ՀՀ դրամով պլանավորվել է «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով աշխատավարձի գծով ծախս: «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի աշխատողների վարձատրությունը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել է 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 195 որոշմամբ: Պարգևատրման

հոդվածով «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի համար նախատեսվել է 15 000 000 ՀՀ դրամի ծախս, իսկ «Մաքուր Հրազդան» ՀՈԱԿ-ի նախահաշվով՝ 7 500 000 դրամի ծախս: Աղբահանության ծրագրով նախատեսվել են նաև կապի ծառայության վճար, աշխատողների ապահովագրության վճարներ, մեքենաների վարձակալության գումարներ, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսեր, գրասենյակային նյութերի, հագուստի, հատուկ նպատակային այլ նյութերի ձեռքբերման ծախսեր, բնապահպանական վճարների գծով ծախսեր: «Կոմունալ տնտեսություն, աղբահանություն և սանմաքրում» հիմնարկի 4264 հոդվածով պլանավորվել է 90 000 000 ՀՀ դրամ տրանսպորտային նյութերի ձեռքբերման նպատակով: Նախատեսվել են նաև տրանսպորտային սարքավորումների, վարչական սարքավորումների, այլ մեքենաների և սարքավորումների, ինչպես նաև շենքերի և շինությունների ձեռքբերման ծախսեր:

6.3.1 Ջրամատակարարման ծրագրով 4251 հոդվածով նախատեսվել է ծախս 900 000 ՀՀ դրամի չափով ջրամատակարարման խողովակների ընթացիկ նորոգման նպատակով, իսկ 5129 հոդվածով՝ 1 000 000 ՀՀ դրամի ծախս:

6.4.1.51 Փողոցների լուսավորում ծրագրով նախատեսվել է 4212 հոդվածով 60 000 000 ՀՀ դրամի ծախս, որում ներառված են համայնքի մեջ մտնող բնակավայրերի արտաքին լուսավորության ծախսը: Այս ծրագրում ներառել ենք «Հրազդանքաղլույս» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսը՝ 102 694 000 ՀՀ դրամի չափով:

6.6.1 Ծրագրով պլանավորվել է 119 500 000 ՀՀ դրամ գումարի ծախս, որն ուղղվելու է բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգման համար իզոգամի և թիթեղի ձեռքբերմանը, ինչպես նաև ընդհանուր բնույթի այլ ծառայությունների և մասնագիտական ծառայությունների ձեռք բերմանը:

7.6.2 Առողջապահության ծրագրով նախատեսել ենք 500 000 ՀՀ դրամի ծախս համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին առողջության պահպանման, բուժօգնության նպատակով:

8.1.1 Հանգստի, սպորտի ծառայություններ ծրագրով 4252 հոդվածի պլանով նախատեսել ենք նստարանների ընթացիկ նորոգման ծախս 500 000 ՀՀ դրամի չափով նստարանների ընթացիկ վերանորոգման համար, կրթական, մշակութային և սպորտային նպաստների գծով 4727 հոդվածով՝ 1 500 000 ՀՀ դրամի չափով, մարզիկներին միջազգային մրցումներում մասնակցելու համար խրախուսական մրցանակներ տրամադրելու նպատակով :

8.2.3 Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ ծրագրով պլանավորել ենք 119 920 000 ՀՀ դրամի չափով , որից 89 139 000 ՀՀ դրամի ծախս «Հրազդանի դրամատիկական թատրոն-մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար, 30 781 000 ՀՀ դրամի չափով՝ «Հրազդանի համայնքային գրադարան» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերի համար:

8.4.2 4819 հոդվածով 2 000 000 ՀՀ դրամ պլանավորված գումարից նախատեսվել են «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը և «Հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաների ցերեկային խնամքի և զարգացման կենտրոն» երեխաների աջակցության հիմնադրամին նվիրատվություններ, 4621 հոդվածով նախատեսվել է 480 000 ՀՀ դրամ «Հայկական Կարմիր խաչի ընկերությանը» ընթացիկ դրամաշնորհ տրամադրելու նպատակով:

9.1.1 Նախադպրոցական կրթության ծրագրով պլանավորվել է 1 134 853 100 ՀՀ դրամի ծախս, որից 4511 հոդվածով սուբսիդիա 984 853 100 ՀՀ դրամի չափով, 150 000 000 ՀՀ դրամ թիվ 7 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վերանորոգման համար: 50 000 000 ՀՀ դրամ նախատեսվում է մոդուլային մանկապարտեզի աշխատակազմի տարեկան աշխատավարձի և պահպանման ծախսերի համար:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 21-ի N 222 որոշումը, որի համաձայն ամսական աշխատավարձը կազմում է 45 002 300 ՀՀ դրամ, տարեկան աշխատավարձը կազմում է 540 027 600 ՀՀ դրամ: Կապի ծառայության տարեկան գումարը կազմում է 924 000 ՀՀ դրամ /թվով 14 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ների համար ամսական կազմում է 5000 ՀՀ դրամ, թիվ 8 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի համար 7000 ՀՀ դրամ: Էներգետիկ ծառայություններ՝ 4212 հոդվածով նախատեսվել է 71 400 000 ՀՀ դրամի ծախս, որից ջեռուցման ծախսը կազմում է 45 500 000 ՀՀ դրամ, իսկ էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը կազմում է 25 900 000 ՀՀ դրամ, /1 երեխայի համար տարեկան կազմում է 10 000 ՀՀ դրամ/: Նախադպրոցական ուսումնական հաստատության 1 երեխայի համար նախատեսվել է օրական 30 լիտր ջուր /2590 երեխայի համար տարեկան կազմում է 8 929 100 ՀՀ դրամ/: Ընդհանուր բնույթի այլ ծառայությունների գծով 1 երեխայի համար նախատեսվել է 2 000 ՀՀ

դրամ ծախս /2590 երեխայի համար տարեկան կազմում է 5 180 000 ՀՀ դրամ/:
Գրասենյակային նյութերի ձեռք բերման համար 1 խմբի հաշվով տարեկան նախատեսվել է 20 000 ՀՀ դրամ /93 խմբի համար տարեկան կազմում է 1 860 000 ՀՀ դրամ: Մասնագիտական ծառայությունների ձեռքբերման համար 4241 հոդվածով նախատեսվել է 2 531 400 ՀՀ դրամ, որից դեռատիզացիայի համար ծախս նախատեսվել է տարեկան 900 000 ՀՀ դրամի չափով, բուժզննման համար նախատեսվել է տարեկան 877 000 ՀՀ դրամի ծախս, գազի սպասարկման ծառայության համար 754 400 ՀՀ դրամի չափով: Կենցաղային և հանրային սննդի նյութեր՝ 4267 հոդվածով նախատեսվել է 265 472 000 ՀՀ դրամի ծախս, որից 1 երեխայի համար հաշվարկվել է օրական 400 ՀՀ դրամ սննդամթերքի ծախս, որը 2590 երեխայի համար տարվա կտրվածքով կազմում է 261 072 000 ՀՀ դրամ, իսկ կենցաղային նյութեր ձեռք բերելու համար նախատեսվել է 4 400 000 ՀՀ դրամի ծախս /1 խմբի հաշվով նախատեսվել է տարեկան 40 000 ՀՀ դրամ/: Հատուկ նպատակային այլ նյութեր ձեռք բերելու համար 1 երեխայի հաշվով նախատեսվել է տարեկան 2 000 ՀՀ դրամ 2590 երեխայի համար տարեկան կազմում է 5 180 000 ՀՀ դրամ: Համակարգչային ծառայություններ՝ 4232 հոդվածով նախատեսվել է 282 000 ՀՀ դրամի ծախս: Առողջապահական և լաբորատոր նյութեր՝ 4266 հոդվածով նախատեսվել է 385 000 ՀՀ դրամի չափով ծախս, պարտադիր վճարներ՝ 4823 հոդվածով նախատեսվել է 957 000 ՀՀ դրամի չափով ծախս, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում՝ 4252 հոդվածով նախատեսվել է 448 000 ՀՀ դրամի ծախս, 4234 հոդվածով տեղեկատվական ծառայությունների ձեռքբերման համար նախատեսվում է 355 000 ՀՀ դրամ, 4251 հոդվածով նախատեսվում է 30 000 000 ՀՀ դրամ՝ թիվ 13 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների համար:
9.5.1 Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների տարեկան աշխատավարձը հաշվարկվել է հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 07-ի N 200 որոշումը, որի համաձայն տարեկան աշխատավարձը կազմում է ՀՈԱԿ-ների համար՝ 183 904 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 84 924 000 ՀՀ դրամ: Էլեկտրաէներգիայի և ջեռուցման տարեկան ծախսը կազմել է ՀՈԱԿ-ների համար 10 780 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 9 000 000 ՀՀ դրամ, ջրամատակարարման տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 403 100 ՀՀ դրամ, իսկ բյուջետային հիմնարկների համար՝ 600 000 ՀՀ դրամ: Կապի ծառայության տարեկան ծախսը ՀՈԱԿ-ների համար կազմել է 270 000 ՀՀ դրամ, բյուջետային հիմնարկների համար՝ 244 800 ՀՀ դրամ: Ներքին գործուղումները բյուջետային հիմնարկների համար կազմում է 450 000 հազար դրամ, ՀՈԱԿ-ների համար՝ 100 000 ՀՀ դրամ: Արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվող յուրաքանչյուր երեխայի համար մատուցված ծառայությունների դիմաց գանձվող տեղական վճարի չափը սահմանվել է Հրազդան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 7-ի N 199-Ն որոշման համաձայն:
